

Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճեններ և տպածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

"560"

65.05.0

# ՊԱՀԱԿԱՆ ՀԱՐՎԱԾԱՅԻՆ



891542-93

## ԺՈՒՐՆԱԼ—ԴԱՍԱԳԻՐՔ

### Ի՞-Ի ՎԵՐԶԻՆ ԽՄԲԵՐԻ ՅԵՎ ՅՈԹՆԱՄՅԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

**ԺՈՒՐՆԱԼ-ԴԱՍԱԳԻՐՔԸ** — մարքու-լենինյան տեսության հիմունքներով լուսաբանելու յև դպրոցականներին կոմկուսակցության գլխավոր զիջը, մեր առցիալիստական ինդուստրացման, գյուղի կողեկտիվացման, բամբակագործության, պրոդուկտիվ անասնապահության զարգացման խնդիրները:

**ԺՈՒՐՆԱԼ-ԴԱՍԱԳԻՐՔԸ** — յելենելով դպրոցի ուսումնական առաջարկանիներից, տակու յև իր ընթերցադներին ընթացիկ մումենուր՝ կապիտալիստական յերկրների և գաղութների տնտեսական և ֆազումական նզնաժամը, անզ հեղափոխական վերելքը և կոմիտեների պայքարը պրուտարիատի համաշխարհային դիկտատուրայի համար:

**ԺՈՒՐՆԱԼ-ԴԱՍԱԳԻՐՔԸ** — պարզելու յև խորերդային դպրոցի տեղն և դերը մեր վիճակում ժաղավարական տնտեսության առցիալիստական շինարարության և կուլտուրական հեղափոխության ասպարիգում և հայտնաբերելով բացերը՝ կազմակերպելու յև սպորտներին առցիալիգի կառուցման գործն առաջ տանելու համար։ Հայտնաբերելու և մերկացմելու յև դասակարգային բշնակու գործակալներին և սոց. շինարարության ասպարիգում առաջացող աջ և «ձախ» քենումները։

**ԺՈՒՐՆԱԼ-ԴԱՍԱԳԻՐՔԸ** — ծխվալելու և մասամերի սեփականություն և դարձնելու պալատեխնիկումի գաղափարը, դրսեվորելու յև մեր Փարբիկա-գործարանների, Մ.Տ.Կ.-ների և կոլ-խորհութեանությունների դերը դպրոցի պոլիտեխնիկացման գործում, ջախջախիչ հարկած և հասցնելու այս դերը գործականում լքողներին և մերցանակի յև արժանացմելու այս ասպարեզի լավագույն մարտիկներին։

**ԺՈՒՐՆԱԼ-ԴԱՍԱԳԻՐՔԸ** — իր եջերում տեղ և տակու լավագույն դպրացմերի փոքրի տեղափոխմանը, պլանների կառարմանը, դպրոցի մասնակցությանը առցիալիստական շինարարության կոմիկրետ խնդիրների լուծման։ Տակու յև հասարակական կազմակերպությունների աշխատանքը

## ՊԱՏԱՆԻ ՀԱՐՎԱԾԱՑԻՆ

### ԺՈՒՐՆԱԼ-ԴԱՍԱԳԻՐՔ

#### III—IV ՏԱՐԻՆԵՐԻ



Ա. ՆՈՐԵՆԾ

ՀՈԿՏԵՄԲԵՐ

Հոկտեմբերն է, թեև աշուն,  
թեև մշուշ, թոն է ու թաց,  
Տերեփիները գեղնած, նախշուն,  
Քամու թեվով թափվում են ցած.—

Բայց վառվում է մեր սրտերում  
Գարնանային մի վառ արեվ,  
Կամք ներշնչում, հրահրում՝  
Անվերջ կռվել ու պայքարել:

Ու մենք ահա տասչորս տարի,  
Հոկտեմբերի տոնն ենք տոնում.  
Ու տոնելով՝ նոր պայքարի,  
Նոր գործերի հիմք ենք դնում:

Մեր շարքերն այսպես սեղմած  
Բնթանում ենք նորից, նորից,  
Հին աշխարհը ծեր ու գեղնած,  
Նահանջում է մեր գրոհից:

Մեր լենինյան բանակն ահա  
Սյն ժամանակ դադար կառնի,—  
Վողջ աշխարհի, յերկրի վրա  
Հօկտեմբերը յերբ սավառնի:



11-270369P

# ՆՈՅԵՄԲԵՐԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻՑ ԱՌԱՋ

1920 թ ի վ.

Հայկական բուրժուազիան տեր ու տիրական և Հայաստանում :

Դաշնակցական կուսակցությունը մառզերներով, անդլիական հրացանների կոթերով և անդիական վոսկով աշխատում եր ամ-



Ապստամբ գյուղացիներին ծածկով  
փախցնում են:

բապնդել բուրժուական իր իշխանությունը, «մաքրել» ու լայնացնել «անկախ» Հայաստանի սահմանները:

Նա պատերազմի յեր բռնվել մի կողմից Տաճկաստանի և Աղբբեջանի հետ, մյուս կողմից՝ կոտորում եր Զանդիբաստրի, Վեղիի, Շարուրի թուրքերին:

Թուրք աշխատավոր գյուղացիներին անխնա կոտորում ու թարխում ելին դաշնաչյական այլ «քաջարի» զորքերը:

Դաշնակցությունն անխնա կերպով, դադանությամբ խեղդում

եր գյուղացիական շարժումները: Նա արյան մեջ խեղդեց մայիսյան աղաստամբությունը, գնդակահարեց այդ աղաստամբության գեկավարներին, Սևանի կղզում փակեց Հայաստանի Կոմիտասկցության ղեկավարներին, կարծելով, թե այդպիսով իր գոյությունը կապահովվի հետագա փոթորիկներից:

Հայաստանի բանվորներն ու գյուղացիներն իրենց կաշվի վրա գդալով մառզերի դաժանությունը, անդիական ծանր հրացանի հարվածը ել չկարողացան այլպես շարունակել և 1920 թվի Նոյեմբերի 29-ին աղաստամբության վրոշ բարձրացրին:



Ընկերական և ազգային հայաստանական հայափառության հեղափոխության առաջնորդներից:



Ընկերական և ազգային հայաստանական հայափառության առաջնորդներից:

Աշխատավորությունը հոգնել եր անմիտ կոփմներից: Նա գարձել եր արյունաքամ: Քաղաքներում լիքն եր քաղցած և մերկ ժարդկանց բաղմությունը:

Բանվորներն ու գյուղացիներն ուզում ելին ձեռք բերել այն, ինչ ձեռք ելին բերել իրենց ընկերները հյուսիսում—իշխանությունը, հողը և գործարանները:

Խորհրդային մուսատանի բանվորների ու գյուղացիների սորինակին հետեւելով, Հայաստանի աշխատավորները տապալցին դաշնակցական տիրապետությունը և, Կարմիր բանակի սպառթյամբ, հաստատեցին խորհրդային իշխանություն:

Այս տասնեմեկ տարվա ընթացքում Հայաստանի աշխատավորությունն Անդրկովկասի աշխատավորության հետ միացած, կամ

կուսակցության ղեկավարությամբ ստեղծում են սոցիալիստական հասարակարդ:

Խորհրդային Հայաստանում կատարված ե մեծ չափի շինարարություն, կառուցվել են նոր շենքեր, գործարաններ, գաշնակցական այլբարված հայաստանը վեր ե ածվում սոցիալիստական յերկրի, արդյունաբերական կենտրոններով և կոլեկտիվացած գյուղերով:

Գյուղում աշխատավոր գյուղացիությունը հասկացել է կուլտիվի առավելությունը: Հայաստանում աշխատավոր գյուղացիության 35 տոկոսն ընդգրկվել է կոլեկտիվ տնտեսություններում:

Այստեղ, ուր առաջ սարսափն ու ավերածությունն եր իշխողը, այժմ սոցիալիստական հասարակարդ և կառուցվում:

ՀԱՅԿ

## ՊԵՏՔ Ե ԳԻՏԵՆԱԱ

1920 թ. նոյեմբերի 30-ին եր, թե գեկտեմբերի 1-ին, լավ չեմ հիշում, — վոր Յերեվանում, Աբովյան փողոցից վոչ շատ հեռու մի տան մեջ մեծ յեռ ու գեռ կար: Զանազան հասակի ու տեսակի մարդիկ անդադար գնում զալիս եյին: Բայց պարզ եր, վոր բոլորն ել շատ ուրախ եյին ու զվարթ: Ամենքի գեմքին կարդացվում եր մի բան — կարծես սպասում եյին վաղուց ցանկացածին, վորն անպատճառ պիտի զար, ու պիտի զա անպատճառ, ու պիտի զա շատ չուտով, ու պիտի զա փառքով ու հաղթանակով:

Դրանք բանտից նոր դուրս յեկած կոմունիստներն եյին, Հայաստանի կուսկազմակերպության ղեկավարները:


Պատանի ընթերցող, դու պետք ե զիտենաս, թե ովքեր եյին նրանք, պարտավոր ես իմանալ, թե ովքեր եյին, վոր իրենց կյանքի գնով, զանակների մառուերի ու մարակի տակ հող եյին պատրաստում, կաղմակերպում մասսաներին՝ մեր յերկրից կեղեքիշներին քչելու համար, իշխանությունը բանվորներին ու աշխատավորներին տալու համար, մեր յերկրում սոցիալիստական կարգեր հաստատելու համար:

Ահա նա, մի շատ յերիտասարդ, սպասանելական աղքամազք յերեսին, զանգուր ու փարթամ մազերով, արևելքցու, վառված ածուխի նման, կայծակնացայտ աչքերով: Միջին հասակ ունի,

բայց պինդ է, գեռ նույնիսկ վոչ առնական կաղմացածքով: Ու այդ յերիտասարդը կարծես ղեկավարում, տոն ե տալիս բոլորի խոսքին ու գործին: Ամենքը սիրով ու պատկառանքով են վերաբեր-վում նրան:

Սա Ազատի Խանջյանն է. Հայաբանի կոմկուսակցության (բայլշեկների) կենտրոնական կոմիտեյի գլխավոր քարտուղարն այժմ:

Նրա մոտ կանգնած է մի կարճահասակ, միջին տարիքի մարդ: Բանվոր է նա, այդ յերեսում ե նրա քիչ վեր բարձրացրած, կարծես գործի պատրաստ ուսերից: Յերկարամյա հեղափոխականի ան-



Հնկ. Ա. Խանջյան

գուլ պայքարի կնիքը դրված եր այդ մարդու ճակատին. ընդհատակյա կուսկազմակերպչի խորին մտածողությունը վառվում եր նրա հայացքում:

Դա ամենքին ծանոթ Սերգո Մարտիկյանն եր, այժմ Հայաստանի ժողովնախորհի նախագահը:

Թեթև ու հպարտ քայլվածքով ահա ներս մտալ մի ուրիշ յերիտասարդ: Ճիշտ ե, բանվորի այն ժամանակվա չարքաշ կյանքն ու բանտի պայմանները մաշել եյին նրան, բայց նրա լուսավոր

համատի ու պայծառ հայացքի մեջ արտացոլում եր հաղթանակի հզոր գիտակցությունը։ Դա ընկ ։ Գալոյանն եր ։ այժմ կվէ՛ ի նախադան ու ԲԳՏ-ի կոմիսարը։

Պատշաճամբում խոսում եյին յերկու զինվորական ։ նրանցից մեկը գեղեցկագեմ եր, ժպուն ու ցուռն աչքերով։ Երա գեմքին նայողը կհավատար, վոր հանուն հեղափոխության նա պատրաստ



Հնկ. Ս. Մարտիրոսյան



Հնկ. Ա. Գալոյան

ե ամեն ինչի։ Շարժումները վճռական եյին ու հատու, ձայնը՝ զիւ ու հնչուն, խոսքերն անկեղծ ու համոզված։

Նա իր յերիտասարդ կյանքը դոհ բերեց հեղափոխությանը, 2—3 ամիս հետո դաշնակների ավանտյուրայի ժամանակ։ Սա անմոռնալի ու աննման լիլարիտ Միջյանն եր։

Նրա ընկերը միջահասակ, բայց կազնու կոճղի պես հաստատուն մի յերիտասարդ եր, խոսում եր շատ քիչ ու ցածրածայն, կարծես իր համար։ բայց ասածը խորիմաստ եր ու լավ մտածված։ Հանդիսատ եր, ինքնավստահ ու կուռ հալատով։ Դա ընկ Հակ։ Արոյանն ե. այժմ Հայկական Դիվիդիայի հրամանատարը։

Այդ ժամանակ նրանց մոտեցավ չինարու պես բարակ, չինարու պես բարձրահասակ մի յերիտասարդ։ Ելի զինվորական։ Դա կարծես վոչ թե քայլում, այլ սլանում եր, խոյանում եր արծվի պես ու կարծես պատրաստ եր արծիվների գեմն ել կովել — յերկնքի կամարի տակ — հանուն մեծ գործի։

Նրա անունը Մովսես եր, գաշնակ խմբապետ Յաղոնն ալան-

այուրայից հետո Պարսկաստան վարչելիս գնդակահարեց նրան։ Նա մեռնելիս ել գոչել ե. «Մերն ե հաղթությունը»։ Փա՛ռք նրա անվանը։

Այդ ժամանակ չնչակտուր ներս վաղեց մի քիչ ծաղկառար, քիչ ել քյոսա մի յերիտասարդ բանվոր ու գոչեց։ «Դավիս են»։ Դա Սամսոնն եր՝ գրաչար, ազգը՝ Աստվածատրյան։ Այժմ աշխատուք և Սարդարաբաղում։

Երա հետեւից ներս ընկավ մի ուրիշ յերիտասարդ, կրակ եր



Հնկ. Զ. Վարդան

վառվում նրա բորբոքված աչքերում, կարծես գետինը պիտի փըլչեր նրա առնական վոտքերի տակ։ Այնքան եր ուրախ, վոր խոսել չեր կարողանում ու միայն ճշաց — «յեկա՞ն»։ Դա ընկ Մանուչարյանն եր։ այժմ աշխատում ե կենտկոմում։

Դե՛, յես, պատանի ընթերցաղ, բոլորի պատկերը տալ չեմ կարող, բայց գու պետք ե զիտենաս, պարտավոր ես ճանաչել նրանց ու յերբ մեծանուս, գնաս նրանց ճանապարհով։

## ԱՄՐԱՊՆԴԵՆՔ ԱՆԴԻԿՈՎԿԱՍՍԻ ՖԵԴԵՐԱՑԻԱՆ

Անդրկովկասը միութենական 7 հանրապետություններից մեկն է: Նա տնտեսական ու քաղաքական ամուր թելերով կազմած է Խորհրդային Միության հետ: Անդրկովկասի բանվորներն ու գյուղացիները մասնակցում են ԽՍՀՄ-ի շինարարությանն ու պայքարին, նրանց հետ միասին սոցխալիզմ են կառուցում աշխարհի մեկ վեցերորդ մասում: Անդրկովկասի հայ, թուրք, վրացի բանվորներն ու գյուղացիները համախմբված կոմկուսակցության շուրջը, ամրացնում են Անդրկովկասի ֆեղերացիան, անողոք կոխի ևն մղում դասակարգային թշնամու՝ կուլակի ու նրա շահերի պաշտպան դաշնակի, մուսավաթի ու մենչեկի դեմ, սոցմբցման ու հարվածայնության աշխատանքի տեմպով բարձրացնում են մեր արդյունաբերությունը, կոլեկտիվ ու խորհրդային տնտեսությունների միջոցով կազմակերպում են քայլայլած տնտեսությունները, զարգացնում են մեր գյուղատնտեսությունը, գուրս են բերում գյուղացիությանը քաղցից ու աքատությունից և համատարածի հիման վրա վերացնում են կուլակներին, վորպես դասկարդ:

### 1. ԱՆԴԻԿՈՎԿԱՍԸ ՑԱՐԻՑՄԻ ԺԱՄՄԱԿԱ

Ցարական կառավարությունն Անդրկովկասը շահագործում ու թալանում եր, պահում եր ժողովուրդներին սրբկական պայմաններում: Բնակչության վրա դրված ծանր հարկերը, ցարական պաշտոնյաների շահատակություններն ու կաշառակերությունը, մանր աղղերի կուլտուրական առաջադիմության ճամբին դրված խոչընդուները, մայրենի լեզվով հրատարակվող թերթերի և գլուխերի վրա դրված արգելքը, դպրոցների ոռուսականացումը ևալին, տեղական բնակչությանը դնում ելին ամենածանր դրության մեջ: Անդրկովկասի գյուղացին իր մանր տնտեսությունը վարում եր պատճենական չութով, հնձում մանդաղով: Ստացած բերքի մեծ մասը տանում ելին կառավարությունը, վաշխառում ու չարչին:

Ահա ինչպես և նկարագրում հովհաննես Թումանյանը գյուղացու կյանքը.

«Պարտքատերը դանդատ գնաց,  
Քյոխին կգա, կծիծի,  
Տերտերն որհնեց, անվարձ մնաց,  
Կբարկանա, կանիծի»:

Դառն եր նույնպես բանվորների վիճակը: Թե՛ նավթի ու պղնձի հանքերում, թե՛ դործարաններում ու յերկաթուղում — նրանք ապրում և աշխատում ելին չլուած ծանր պայմաններում, հակառանիտարական բնակարաններում, ամեն բոլե վտանգի տակ: Գրողներից մեկն այսպիս ե ոլատկերացնում նրանց վիճակը:

«Եերք ժամը վեցը խփեց, սուլիչը ճշաց: Գիշերվա բանվորները մրջունների պես դուրս թափվեցին գործարանի խորշերից, և նրանց տեղն խորոյն բանեցին ցերեկվա բանվորները, վոր աշխատեն մինչև յերեկոյան ժամի վեցը:

Նրանք չոգով ընկած՝ հեռամ ելին, բայց հեղձուկ շրջապատում աղ ել չեյին դտնում, վոր շունչ քաշեն: Մրոտ քղանցքներով հովհարում ելին իրենց, բայց հրակիղ ողը հովություն չեր տալիս նրանց այրվող յերեսներին: Նրանք հալավաները թրջում ելին ավագանում, բայց տաքացած ջուրը զովություն չեր տալիս նրանց խաշլող մարմիններին: Ծուխն ուտում եր նրանց աչքերը, գործիքները դադում ելին ձեռքերը: Կրծքներն ուռչում ելին փուքուրի նման ու քրտինքը ձականներից հոսում եթ, հոսում:

Դատավարաված հողիների պես մեծ ու պստիկ տանջվում ելին կրակի մեջ: Նրանց այրված սրտին միխթարանք տվող չկար: Նրանց մորմաքող հոգուն հովություն տվող չկար: Մի պատառ հացի համար յոթը կաշի ելին հանում, տանջվում, փոթոթվում: Ի՞նչ անեն: Առանց հացի աղրել չի լինում: Սոված յերեխան հաց ե ուղում: Բայց ինչու այդ գժուխքը դրախտ ե տերերի և կառավարիների համար, վորոնց յերեխանները հացի կարոտ չեն քաշում, անհող են, ուսում են առնում, բախտավոր մեծանում: Նրանց այդպես զո՞ւ ու բախտավոր դարձնողն անտանելի շահագործման վատավարտված բանվորներն են, վորոնք զրկված են աշխարհի բոլոր բարիքներից: Ինչո՞ւ յէ այդպիսի խտրություն դրվել մարդկանց մեջ, վոր մեկը չափից դուրս աշխատելով սոված մնա, մյուսը՝ մեջքն ել չկուացնելով կուշտ ապրի:

... — Եսքան զրկանք լլիինի՞: Դանակը վուկորին հասավ...

Հաց են տալիս ենքան, վոր վոչ կշտանա, վոչ ել սովից սատկես, նրանց յերկու աշխատավոր ձեռքերից զրկես: Մեր մեղքն ու մեր կուռն ե նրանց պետք...

Բայց թևանի խոսքը բերանումը մնաց: Բանվորների սարսափվերացացն հանկարծ ծառացավ նրա առջե և շանթակեղ հացքը զցելով նրա աչքերին՝ դուաց.

— Տուգանք, կես որավարձի:

— Ի՞՞ բարդութեց Թեւանը : Բան ե պակա՞ս , թե՞ գործա կի-  
առատ ...

— Շո՛ւն , հալա մըթմըթո՞ւմ ել ես , — վրիբեց վերակացում  
և իր ամենակտրողությունը նորից ցույց տալու համար , ձեռքի ճի-  
պոտով զաղեց Թեւանի ուսն ու գոռաց .

— Տուղան'ք , կես որավարձի»...

(«ԳԵՏԱԲԵՑԿԻ ՊՐՆՉԱՀԱՆՔՈՒՄ»)

Ահա ինչպես եյին սկասասիանում բանվորներին , յերբ վեր-  
պիններս բողոքում եյին իրենց անսանելի շահագործման դեմ : Բան-  
ուը , աքսորն ու վոստիկանի մտրակն եյին բանվորի , դյուլացու  
արդարացի պահանջների պատասխանը : Այսպիս եր վարվում ցա-  
րք : Այսպես եր պահանջում այն դասակարգերի շահը , վօրոնց  
ներկայացուցիչն եր ցարք :

## ԳԱՅՆԱԿՆԵՐԻ , ՄԵՆՇԵՎԿԻԿՆԵՐԻ ՑԵՎ ՄՈՒՍԱՎԱՐ- ՆԵՐԻ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Փոխվե՞ց , արդյոք , բանվորների ու գյուղացիների զրությու-  
նը զանակների , մենշևկինների ու մուսավաթների տիրապետու-  
թյան ժամանակ :

Բոլորովին վոչ . վոչ միայն շփոխվեց , այլև ավելի վատա-  
ցավ :

Հենց վոր իշխանության գլուխ անցան այդ կուսակցություն-  
ները , հենց վոր Անդրկովկասում տեր զարձան հայ , թուրք և վրա-  
ցի բութուաները , — բանվորներն ու գյուղացիները զրկվեցին  
այն բոլոր նվաճումներից , վոր ձեռք եյին բերել Հոկտեմբերյան  
Հեղափոխության չնորհիվ : Անդրկովկասի բնգերը , խանները , ա-  
զգաները , կոյազներն ու մատուցերիսաներն աղքատներից խլում եյին  
հոգը և ճորտական կարման մեջ զնում նրանց : Դաշնակները Հա-  
յաստանը մաքրում եյին ... թուրքերից , մենշևկինները Վրաստա-  
նը՝ հայերից , մուսավաթիսաները Աղբերեջանը՝ հայերից : Մեն-  
շևկիններն ու զանակները կովում եյին իրար հետ լոռու հա-  
մար , զաշնակներն ու մուսավաթիսաները՝ Ղարաբաղի ու Զան-  
գեղուրի համար : Հասում եր Անդրկովկասի հայ , թուրք , վրացի  
աշխատավորների արյունը : Իսկ այդ արյան հաշվին քեֆ եյին  
քաշում ու չաղանում բուրժուաները :

Հեղափոխական շարժումները դնալով ուժեղանում և խորա-  
նում եյին աշխատավոր մասսաների մեջ : Այդ մասսաներին հար-

կավոր եր հող , հայ և ազատություն . իսկ «աղատ և անկախ» Հա-  
յաստանում , Վրաստանում և Աղբերեջանում հողն ել , հացն ել ,  
ազատությունն ել գտնվում եր խաների , աղաների , թավաղների ,  
մատուցերիսաների և բութուաների ձեռքին : Ապստամբում եյին  
գյուղացիներն Աղբերեջանում և Հայաստանում (իջևան) հողի հա-  
մար , ապստամբում եյին բանվորները (մայիսյան ապրատմբու-  
թյունը Հայաստանում) : Իսկ մուսավաթիսաներն ու դաշնակները  
մատուցերն եյին ուղղում սովոր աշխատավորների դեմ :

Հեղափոխականները հարյուրներով բանտարկվում եյին , գըն-  
դակահարվում : Հայաստանի կոմկուսակցության առաջնորդներին  
բանտարկել եյին Սկանի կղզում :

Անդրկովկասում բայլէիկիններն իրենց հետ ունենալով բանվո-  
րությունը , Բագվի կոմունայի զեկավարությամբ՝ Առուրդային  
Ռուսաստանի որինակով , պայքարում եյին խանների , աղաների ,  
թավաղների և մատուցերիսաների դեմ , կովում եյին գաշնակների ,  
մենշևկինների , մուսավաթիսաների ու եսերների դեմ : Բագվի Կո-  
մունան ամբողջ Անդրկովկասում մենակ եր , թշնամինները շատ  
ներքին և արտաքին հականեղափոխական ուժերը միացյալ ճակատ  
եյին կազմել Բագվի խորհրդի դեմ : Անդիլացինները , տաճիկներն ու  
գերմանացիններն ողնում եյին հականեղափոխական կուսակցու-  
թյուններին՝ տապարիու կոմունան : Կոմունայի առաջնորդները՝  
Շահումյանը , Զավարիձեն , Աղիզբեկովը , Ֆիալեստովը և մյուս  
ընկերները , կոմունայի անկումից հետո , ամենադաժան կերպով  
գնդակահարվեցին :

Ստկայն 26 կոմունարների գնդակահարությամբ չմեռալի Ան-  
դրկովկասի բանվորությունը : Բանվորներն ու գյուղացինները կոմ .  
կուսակցության առաջնորդությամբ տապալեցին , դաշնակների  
իշխանությունը Հայաստանում (1920 թվի նոյեմբերին) , մուսա-  
վաթիսաներին Աղբերեջանում (1920 թվի ապրիլին) , մենշևկիննե-  
րինը Վրաստանում (1921 թվի փետրվարին) :

## ԱՆԴՐԿՈՎԿԱՍԱՆԻ ՖԵԴԵՐԱՑԻԱՆ

Անդրկովկասի աշխատավորները վոչնչացրին հայ , թուրք ,  
վրացի բուրժուաների , խանների , աղաների և թավաղների իշխա-  
նությունը և իրենց ձեռքը վերցրին պետական իշխանությունը :  
Նրանք սուսացն հող , խաղաղություն , 8 ժամյա բանվորական որ :  
Իսկ Վճարմբեկանական կերպով կույլ եր մղում : Առ որին ուն  
նորից նորից կաղմանելով կույլ և աշխատում իշխանությունը գրու-  
ուի ցանկարանը մշակուած իշխանական աշխատավորները 13

Հել: 1921 թ. պիետրվարին դաշնակները կարողացան Յերևանը զբավել: Նույն փորձը կատարեցին Գյանջայում՝ մուսավաթիստները: Բայց խորհրդային կառավարության ձեռք առած միջոցների, կարմիր բանակի քաջ մարտիկների չնորհիվ Անդրկովկասը վերջնականապես մաքրվեց դաշնակների, մենշևիկների, մուսավաթիստների ճնշումից և գարձավ խաղաղ, շինարարական մի յերկիր: Այդ շինարարությունն ավելի արագ թափով առաջ տանելու, ձեռք բերած խաղաղությունն ավելի ապահովելու, ներքին ու ար-



Հնկ. Ստ. Շահումյան

տաքին թշնամիների գեմ ավելի ուժեղ պայքարելու, աղքերի միջն խաղաղություն ստեղծելու և սոցիալիզմի կառուցումը հաջող տանելու համար, 1922 թվի գեկտեմբերի 13-ին, Բազվում գումարված Անդրկովկասյան խորհուրդների առաջին համագումարը վո-

րոշեց. ստեղծել Անդրկովկասի Ֆեղերացիան, վորի մեջ մտան Հայոստանը, Վրաստանը և Աղրբեջանը:

Անդրկովկասի Ֆեղերացիայով ստեղծվեց մի ամուր բռունցք հակահղափոխականների գեմ, սոցիալիստական շինարարությունն առաջ տանող ուժեղ և անսասան մի ձեռք:

Հնկ. Լենինը 1921 թվի ապրիլին Կովկասի (Աղրբեջանի, Հայոստանի, Վրաստանի, Դաղստանի և լեռնային հանրապետությունների) կոմունիստներին ուղղած նամակում, գրում ե.

«Զերմորեն վողջունում եմ Կովկասի խորհրդ. հանրապետությունները և թույլ եմ տալիս հուսալու, վոր նրանց ամուր միությունը կստեղծի ազգերի համերաշխության այնպիսի որինակ, վորը չի տեսնված և անհնար և բուրժուական կարգերում»:



Հնկ. Ազիզեկով, Բազվի կոմունայի առաջնորդներից.

Աղա խորհուրդ և տալիս Կովկասի կոմունիստներին .—

«Անմիջապես աշխատել բարելավել գյուղացիների դրությունը, սկսել ելեքտրիֆիկացիայի, վոսովման խոչոր աշխատանքներ; Վոսովման ամենից շատ ե պետք և ամենից ավելի կվերածնի, կվերստեղծի յերկերը, կթաղի անցյալը, կամրացնի անցումը զեղի սոցիալիզմ»:

Կովկասի կոմունիստները, Հետահելով ընկ. Լենինի խորհրդին, ձեռնարկեցին Անդրկովկասի վերածնման դործին:

Թե ինչպիսի մեծ չափեր եւ ընդունել Անդրկովկասի նոր ձեռնարկների շինարարությունը Փեղերացիայի ստեղծումից հետո՝ ցույց են տալիս հատկայի թվերը՝

Արդյունաբերության մեջ ներգրավել են .

1925-26 ♂ - 20.072 Հաղար ռուբի

1926-27 F.—24.558 » »

1927-28 £.—45.865 » »

1928-29 P.—52.558 » »

Իսկ յեթէ սրան ալիւրցնենք նաև Բագվի նավթարդյունաբերության մեջ ներդրաված գումարները, ապա կունենանք հետեւյալ թվերը.

1925-26 ♂.—97.989 հազար ոռուիկ

1928-29 £.-190.938 » »

ՅԵԹԻ ՀԱմեմատենք Հնդկոմյակի առաջին և վերջին տարիների արտադրանքը, ապա մենք կտեսնենք, ուզո՞ր հնդկամյակի վերջում մեր արդյունաբերությունն ու գյուղատնտեսությունը 2 անգամ ավելի արտադրանք կտան, այսինքն 1927-28 թ. 1229 միլիոն ռուբլու փոխարեն 1932-33 թ. 2298 միլիոն ռ. :

Հնդամյակի ընթացքում գործի կանցնեն բաղմաթիվ նորակառուց գործարաններ, Ելեքտրոկայաններ, կկաղմակերպվեն նոր սովորողներ, հիմնականում կավարտի կոլլեգարժումը, վորով հնարավոր կլինի ամբողջ ժողովրդական տնտեսության արտադրանքը հնդամյակում հասցնել 12-13 միլիարդ ռուբլու; Թե ինչի վրա յե ծախսավում այդ գումարը, ուոյց և տալիս հետեւյալ աղոթաբակը:

Ներդրումներ	.	.	.	.	.	2852	միլիոն ռուբլի
Լուսավորության	.	.	.	.	.	422	»
Ասողջապահության	.	.	.	.	.	178	»
Սոցապահովության	.	.	.	.	.	26	»
Վարչ. այլ ծախսներ	.	.	.	.	.	259	»

Մեր զյուղատնտեսությունը և արդյունաբերությունը ելեքտրիֆիկացիայի յննթարկելու համար կառուցվում են նոր ելեկտրակայաններ, դրանցից հայտնիներն են.

16. Արանսկի բայ առերտով, ինչպես 100, հետվատով, ու  
20 տարիի ըմբռեա և զանգ և ու 19,000 ման օնորութ  
էր Հանաժապնաց, լայնութեան 15,000 ման հարստութիւն

կառուցվում են և չուտով պատրաստ կլինեն յերկու մեծ յերկաթուղիներ՝ Սևծովյանը (171 կիլոմետր յերկարությամբ) և Ջուրֆա-Բագվինը (148 կիլոմետր յերկարությամբ):

## Հնդամյակում կոկովեն շինով

1. ՅԵՎԼԱԽ-ՍՄԵԼՎԻԱՆՆԱԿԵՐՊ յԵՐԿԱԾՈՒՂԲՆ՝ 95 կիլոմետր,
  2. ԱղասաՓա-Իջևան-ՅԵՐԿԱՆ յԵՐԿԱԾՈՒՂԲՆ

և այլ յերկաթուղիներ, ընդամենը 794 կիլոմետր յերկարությամբ, վորոնց վրա ծախսվելու յէ 127 միլիոն ռուբլի: Խոչոր գումարներ են ծախսվելու նաև գյուղատնտեսության գծով: Հենց միայն վոռոգման և ճահիճների չորացման համար ծախսվելու յէ 160 միլիոն ռուբլի: Այս հսկայական աշխատանքները հնարավոր ե կատարել միայն Անդրկովկասյան Ֆեդերացիայի, միայն խորհրդ՝ իշխանության շնորհիվ:

Մենք պիտի լարենք մեր բոլոր ուժերը, վորպեսզի առահովենք մեր ձեռք բերած նվաճումները, մեր շինարարությունը, մենք պիտի ողնենք մեր ծնողներին վերպեսզի հնգամյա պլանը կատարվի 4 տարում :

ՀԱՅԿ ԳՈՐՅԱՆ



11-27036913



# ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Ա. Ի. Լենինը ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ ԵՐ ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

Աքտասահմանից Վ. Ի. Լենինը Ռուսաստան վերադարձագ փետրվարյան հեղափոխությունից հետո :

Ռուսաստան գալով նա սկսեց բացատրել բանվորներին և գյուղացիներին, վոր ժամանակավոր կառավարությունը խարում է, վոր նրանք հաց, ազատություն, հաշտություն չեն տա :

Լենինը կոչ եր անում բանվորներին—Համախմբվել բայլշեմիկների կուսակցության ջուրչը և տապալել բուրժուական ժամանակավոր կառավարությունը :

«Ժշանությունը—խորհուրդներին» :

Այս կոչով իւլիչը դիմեց բանվորներին, սալրատներին և դյուզացիներին :

Ահա, թե ինչպես ե պատմում մի բանվորուհի Լենինի այդ շրջանի աշխատանքի մասին :

«Բնկ. Լենինը դեռ նոր եր յեկել Ռուսաստան։ Յես աշխատում եյի «Սկարաբատ» («Էլրասի արուգ») գործարանում։ Գործարանում լուր եր տարածվել, վոր Լենինը յեկել և արտասահմանից կնքված վագոնով և իր հետ բերել մեծ քանակությամբ վոսկի, բանվորներին կաշառելու և «մայր Ռուսաստան» գերմանացիներին վաճառելու համար։ Մենք, բայց և իները գործարանում քիչ ենքնք։»

Յերեկվա ժամի 12-ն ե—ժողովուրդը չտեսնված չափով լցվել է կտուրների, ցանկապատերի, ծառերի վրա։ Անհամբեր սղասում ենք Լենինին։

Ահա փողոցում յերեկաց ավտոմոբիլ։ Նշանակված վայրը շտապում են յերեխաները և հասակավորները։ Յուրաքանչյուրը ցանկանում է տեսնել իր սեփական աշքերով ընկ. Լենինին։

Ինչպես հիմա հիշում եմ, Լենինը իշակ ավտոմոբիլից, հանեց


դպրաբեր, բարեկեց բոլորին և դնաց դեպի տրիբուն։

Յեզ հանգիստ սկսեց խոսել.

«Ենկերներ, մեզ մոտ Ռուսաստանում հեղափոխություն ե։ Իշխանությունը դանկում է բուրժուական ժամանակավոր կառավարության ձեռքում։ Իսկ ի՞նչ են ստացել բանվորները։»

Յերկար է խոսում Վլադիմիր Իլյիչը. քրտինքը ջրի պես թափառում եր ինչպես հունձ անել յառան ժամանակ։

Նա առամ եր այն մտախ, վոր բանվորները և գյուղացիները



Բնկ. Լենինը.

«Իմասին, ձեսք ձեռքի տված, ոլխով պաշտպանեն հեղափոխության հաղթանակները, իրազործեն պրոլետարիատի դիկտուարան։»

Ագահությամբ կլանում են նրա խոսքերը։ Այնպես պարզ և անպիս հանկանալի։

Հետո առաջարկվեց բանաձեռնություն և մյուս կուսակցությունների կողմից։ Բայց մեծամասնությամբ անցավ բայլշեմիկների բանաձեռնությունը։

Յերեկոյան ժամի 8-ն եր։ Լենինին ճանապարհ չելին տալիս։ Մասսան չեր ուզում բաց թողնի նրան։ Աւղեկցելով մինչեւ ավտոմոբիլը, վազում եր նրա հետեից, յերբ նա արդեն դնացել եր։

Թանգարին իլէշին սիրեցին մեր զործարանի բանվորները : Յեզ  
չեր լինում վոչ մի նիստ , վոչ մի ժողով , վորպեսդի չէշիլնք  
ընկ . Լենինին» :

## ԹԱՐԳՄ

### ԱԼԻՔԸ.

ԳԵՎՈՐԳԻ , Վասոյի ու Կոլյայի բնակարաններն իրար շատ մոռ  
ելին—թեև ջոկ ջոկ աներում :

Նրանք ապրում եյին Անդրկովկասի մեծ քաղաքի բանվորա-  
կան թաղում : Ճիշտ ե՝ նրանք տարբեր արհեստների տեր եյին և  
աշխատում եյին զանազան գործարաններում ու զանազան խազե-  
յինների համար , բայց շատ մտերիմ եյին : Վոչ թե հարեվանու-  
թյունն եր պատճառը , վոր նրանք մտերիմ եյին , այլ գլխավորապես  
այն , վոր նրանք յերեքն ել շահագործվող բանվորներ եյին և յե-  
րեքն ել բայլշերիկ :

— Վասո՛ , մի ես կողմն արի , ձայն տվեց ԳԵՎՈՐԳՈ դեռ իր  
տան պատշգամբում :

— Հը , ի՞նչ ե պատահել , հո , աշխարհը շուռ չի՝ յեկել , ժպտա-  
լով հարցրեց Վասոն գլուխը պատուհանից դուրս հանելով և գե-  
վորդի ձայնի մեջ ինչ վոր արտասովոր բան նկատելով :

— Կա , կա , բան կա : Յեթե Կոլյան յեկել ե , նրան ել ձայն  
տուր , — շտապեցրեց ԳԵՎՈՐԳ :

Հինգ բուլելից հետո յերեք մտերիմ ընկերներ նստած եյին ԳԵ-  
ՎՈՐԴԻ բնակարանի փոքրիկ պատշգամբում :

— Նու , ի՞նչ ե պատահել , — խոսեց Կոլյան , — դե ա՛սա :

— Ի՞նչ . ընկերնե՛ր , յեթե՛ ճիշտ ե , պետք ե զործի անցնել :

— Դե ա՛սա մի , տո՛ , հետո կմտածենք , թե ի՞նչ անենք , — բար-  
կացավ Վասոն , վոր , ինչպես յերեսում եր , ընկերների մեջ ամենից  
հեղինակավորն եր՝ իբրև հին հեղափոխական ու վործված մարդ :

— Այ ինչ , — հուղված սկսեց ԳԵՎՈՐԴԻ , — եսոր մեր կոշկակարա-  
նոցը հասուկ պատվեր ունենալու պատճառով ուշ շարաչ արագ :  
Թե՛ արհեստանոցում , թե՛ քաղաքում լուր ե տարածել , թե ԳԵՎ-  
ՐՈԴՐԱՊՈՒՄ մերոնք իշխանության գլուխն են անցել :

— Ի՞նչ , ո՞վ ասաց , վո՞րտեղից են լսել այդ , չնչակառուր արագ  
արագ հարցրեց յերիտասարդ Կոլյան :

— Այսինքն ի՞նչպես — լուրերը հիմք ունե՞ն , թե՞ մենշեկներն  
են դիտմամբ տարածել , — խոսեց Վասոն :

— Զե , չե , եղ տեսակ լուրերի նման չի . ենպես և թվում , վոր  
ձիւտ պետք ե լին :

Կարձ խոսակցությունից հետո ընկերները վորոշեցին անմի-  
ջապես քաղաք դուքս դալ , անցնել կուսակցության կենտրոնը և  
ըստ հրահանդի անմիջապես գործի անցնել :

Նրանց խոսակցությունը տեղի յեր ունենում խառը լեզվով .  
յերեքն ել ամբապետում եյին ոռուսերեն , վրացերեն և հայերեն լե-  
զուներին և միմյանց հարց ու պատասխան եյին տալիս՝ ո՛վ վո՞ր  
լեզվով ուզում եր :

Քաղաքի վորոշներում դեռ կարծես արտասովոր բան չկար .  
Հենց վաք ծանոթ մարդու եյին հանդիպում , բոլորն ել նույն բանն  
եյին հարցնում :

— Ի՞նչպես ե յեղել ; Ի՞նչ մանրամասնություններ գիտեք .

— Աղյուն , — աղաղակեց , Կոլյան , — ԳԵՎՈ՛ՐԴ , մոտե  
ցիր , մի հարցրո՛ւ , նա մենշեկների մեծերից ե , բան կդիտենա :  
ԳԵՎՈՐԴն անցավ մյուս մայթը և Դարոյին մոտենալով հարց-  
րից .

— Հը , աղջի , ինչի՞ յես մոռւթդ կախել , ի՞նչ ե պատահել :

— Միթում չես իմացել , թե ի՞նչ են արել ձերոնք :

— Ի՞նչ , լսել եմ , վոր ժամանակավոր կառավարությունը տա-  
պալվել ե . ուրիշ վոքինչ :

— Դե ել ի՞նչ պետք ե լինի , բայլշեկները զոռով իրենց հա-  
մար գերեզման են փորում , վաղը մյուս որը վոլորին կոչնչաց-  
նեն . — ասաց Դարոն հուզված և առաջ անցավ .

— Կամա՞ց , կամա՞ց , — ձեռներդ կարձ ե , — հեղնեց ԳԵՎՈՐԴը  
և յետ դարձալ ընկերների մոտ :

— Պա , պա , պա , ընկերնե՛ր , ինչպես յերեվում ե՝ մեծ բան  
ե պատահել . սրանք կատաղել են . . . քիչ եր մնում լաց լինի . . .

Միծաղելով յերեք ընկերները հասան մի տեղ , ուր մի յերի-  
տառարդ շիլ աղջիկ նրանց ասաց , վոր պետք ե գնալ փողոցը , մե-  
րոնք հավաքվում են այնտեղ :


Յերբ ընկերները հասան այնտեղ , դահլիճն արգեն լիքն եր :  
Նեկամար ընկերներից մեկը բացարում եր , վոր դեռ մանրամա-  
սնություններ չկան , բայց ընկ . Լենինի զեկավարությամբ մերոնք  
վերցրել են իշխանությունը և մեծ հուզում կա :

«Մեզ դեռ միայն հեռավոր «ալիքն» և հասել» , — վերջացրեց  
նա:

ՍԻՄԱԿ

— Դե լսի՞ր, և՝, լսի՞ր, ախար ազատություն վոր ասում ենք, զա հո գատարկ խոսք չե՞ն, խակական գործ ե—խակական կյանք է, — հուզված վրա յեր տալիս Աստղիկը, կազմբատակած, յերեսի քըրտինքը սրբելով:

— Յես ել հենց եղ եմ ասում ելի, — ճշում եր Հասմիկը սուր,




Մելանիլիական գրքարժապաններ՝ Ցիկանանութեան

ները, վոր պատրաստվում եյին Հոկտեմբերյան հեղափոխության առնին գնալու:

— Իհարկե, իհարկե, —խառնվեց հռնի կորիզի պես փոքրիկ ու չարաճճի Տիրիկը, — Հոկտեմբերյան հեղափոխությունը մեկ ավեց պիտներական կազմակերպությունը: Իսկ մեր կազմակերպության չորհիմ բացվեցին մեր աչքերը, հասկացանք դասակարգային պայքարի ինչ լինելը, ստանում ենք կոմունիստական դաստիարակություն, պատրաստվում ենք փոխարինելու լենինյան կոմյերիստմիությանը՝ սոցիալիզմի շինարարության մեջ դում:

— Պա, պա, պա, ես ինչ թունդ ճառախոս ե ես թիզ ու կեսը, —



Պիտներական յերթ.

Ժպտալով ասաց ուսուցիչ Սևաչերյանը, վոր անցնում եր նրանց մոտից:

— Իսկ դու ինչ կասես, Նինա, Հոկտեմբերյան հեղափոխությունն ել ի՞նչ է տվել ձեզ—պատանիներիդ, — զիմեց նա կապտաչյա գեղեցիկ Նինային:

— Ի՞նչ, ասեմ, — թուքը կուլ տվեց Նինան. — մեզ տվել ե մեր նոր գպրոցը, ուր մեր ուսուցիչները մեզ հետ վերաբերվում են ընկերաբար, ուր մենք սովորում ենք ճիշտ գիտություններ, ուր մեզ պատրաստում են սոցիալիզմի շինարարներ լինելու, ուր մենք պոլիտեխնիքական կրթություն ենք ստանում, ուր մենք գործա-

մկան ձայնով. — ախար ազատությունը Հոկտեմբերյան հեղափոխության ծնունդն է, հենց ազատության ծնունդն ել մեր կազմակերպությունն է:

Այսպես եյին խոսում դպրոցի բակում հավաքված պիտներ-

կան ու տեսական գիտություն ենք ձեռք բերում, վերջապես, ուր մենք կոմունիստական դաստիարակություն ենք ստանում:

— Այ ապրես, — հիացմունքով ասայ ուսուցիչը:

— Բա մեր նոր ձեռվ դաստիարակությունը, բա կրոնից ու ուրիշ հիմարություններից աղատվելը, բա մեր պիտներական լազգերը, բա մեր ինքնուրույնության դարձացումը, — վրա տվեց անհամբեր հասմիկը:

— Դե իմ ասածի մեջ դրանք կա, ելի՛, — բողոքեց Նինան:

— Ամենագլխավորը մոռանում եք, — ծանր-ծանր, մեծի նման խոսեց Աստղիկը, — ախար Հոկտեմբերյան հեղափոխությունը յեթե ընկեր, մեզնից մեծ մասը անդրագետ կմնար, աշխարհից բան չեր հասկանա: — Ախար Հին կարգերում դպրոց եյին դնում միայն հարաւատների ու տերտերների վորդիները: — Մեծ Հոկտեմբերն էր, վոր բոլորիս, բոլորիս դպրոց ու կրթություն տվեց, այ թե ինչ, — վերջացրեց նա:

## ՀՈԿՏԵՄԲԵՐԸ

Հոկտեմբերյան հեղափոխության նախորյակին ընկ. Լենինը պրում և հեղափոխության խնդիրների մասին:

«Լոգունզն այս ե. իշխանությունը՝ խորհուրդներին, հողը դյուդացիներին, խախաղություն ժաղովուրդներին, հաց քաղցածներին»:

Փետրվարից մինչև Հոկտեմբեր կալվածատիրական-կապիտալիստական ժամանակավոր կառավարությունը իր 8 ամսվա տիրապետության ժամանակ վոչնչով չլավացրեց և չեր ել կարող լավացնել բանվորների ու դյուդացիների դրությունը:

Իշխանության գլուխն անցնելուց առաջ՝ նա աշխատավոր ժողովրդին խռատացավ հող, աղատություն, խաղաղություն և ասլրուստի միջոցներ:

Բայց յերբ դյուդացին հող եր պահանջում, կերենսկու կառավարությունը հանդիսաւ պատասխանում եր:

— Սպասի՛ր մինչև սպատերազմը վերջանա:

Յերբ զինվորները և ամբողջ ժողովրդը խաղաղություն ենին պահանջում, նրանց պատասխանում եյին՝

— Հաղթենք գերմանացիներին, հետո...

Քաղցածներին պատասխանում եր.

— Իիչ ել դիմացեք:

Իսկ յերբ դյուդացին համբերությունից ձանձրացած մանգաղով և յեղանով հարձակվում եր կալվածատիրի վրա և հողը բաժնում, յերբ ուժապատ զինվորն այլևս չեր ուղում կրվել բուրժուազիայի շահերի համար և յեղայրանում եր մյուս աղղերի զինվորների հետ, կամ թողնում Փրոնտը և վերադառնում տուն, յերբ անգութ սովոր չգիմանալով խանութների դռներն եյին կոտրում, կառավարությունը նրանց հետ խոսում եր վոստիկանների, հրաշանի ու թնդանութիւնը բերանով: Ահա այդ պայմաններում ընկ. Լենինի ղեկավարությամբ, կոմ. կուսակցությունը կազմակերպում և մասսաներին, կոչ և մնում զինք վերցնել տապահելու բուրժուազիային, զինքով ձեռք բերել հող, հաց և խաղաղություն:

Դարավոր ստրկությունից, տղիսությունից ու քաղցից ազատվելու միակ յելքը՝ դա իշխանության գրավումն եր խորհուրդների կողմից:

14 տարի յե արդեն, վոր կատարվել և Հոկտեմբերը-Կարմիր հեղափոխությունը: Այս 14 տարվա ընթացքում աշխարհի մասում Խորհրդային Միության բանվորներն ու դյուդացիները կառուցում են սոցիալիստական հասարակարգ, հաջողությամբ իրագործում են համարկը, գերակատարելով այն 4 տարում: Միջակ ու չքարվոր դյուդացիները կուեկտիվ անտեսությունների միջոցով բարեկալում են իրենց անտեսական զրությունը: Ամբողջապես վերակառուցվում ե հին գյուղը: Գյուղացիության 58 տոկոսն արդեն կորտնեսությունների մեջն է:

Կոսպիտարիստական սկետությունները սարսափով են դիմում մեր նվաճումները, նրանք պատերազմ են սպատրասում մեր դեմ, վորպեսզի խանգարեն մեր շինարարությունը: Նրանք ամեն կերպ ցանկանում են մեկուսացած ողակել միջաղղային պրոլետարիատին, բայց այդ նրանց չի հաջողվում:

Մենք պատերազմ չենք ցանկանում. «Վոչ ուրիշի մի թիզ հողն ե մեզ պետք, վոչ ել մենք մեր հողից մի վերը չկիշենք ուրիշեցիւք»: Յեթե կապիտալիստական յերկրները համարձակվեն հարձակվել մեզ վրա, ապա մեր կարմիր բանակը, մեր աշխատավորները նրանց արժանի պատասխան կտան:

# ԿՈԼՏՆՏԵՍՈՒԻԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

## ՄԵՐ ԿՈԼԽՈԶԸ.

Յերկու տարի, սարի պես,  
Մեր կոլխոզն և բարձրացել,  
Զանել կաղնի ծառի պես՝  
Հասակ առել ու անել :

Հիմա ամբողջ գեղովի  
Կոլխոզի մեջ ենք մտել,  
Վող հաղերը ջրովի,  
Բամբակ, բամբակ ենք ցանել :

Դախոկին կուտակ Սերոյի  
Տունը մասու ենք արել,  
Բանող ձեռքը կանացի,  
Քաղիանի յենք դուրս բերել :

Կոկոնները բացվում են,  
Պատրաստվում ենք չանաքի,  
Թող զայրույթից նմլվի,  
Սիրոք կուլակ-դաշնակի :

## ՀԱՅԿ ԳՈՐԾԱՆ

## ԿԱՐՄԻՐ ԱԲՈԶ.

Վաղ առավոտյան գյուղում գղղղացին սայլերը : Մեկը մյուսի  
հետեւց սայլերը մոտենում եյին պահեստին և բեռնվում հացով :  
Դալրոցից յեկան տղերքը և սկսեցին զարդարել սայլերը ժապա-  
վեններով և դրոշակներով : Ժազովուրդը շատանում եր : Շուտով  
սայլերի բեռնավորումը վերջացավ : Կոմյերիտական Խորենը բարձ-  
րացավ սայլի վրա և առաց .

— Խորհրդային իշխանությունը ոգնեց մեղ միավորվել կո-  
լեկտիվի մեջ : Մենք ստացել ենք արակտոր : Հիմա մենք առանց

հացի չենք մնա : Մեր յերեխաները կուշտ կլինեն : Յեկ մենք ու-  
րախությունը հանձնում ենք պետության այս առաջին, մեղ համար  
ամենաթանգարին հատիկը :

— Ուռուա՞—բարձրածայն բացականչեցին բոլորը : Սաքոն  
վեր թռավ ստաջին սայլի վրա, վեր բարձրացրեց դրոշակը և ու-  
րախ յերգեց :

— Անվախ ընկեր, քայլենք...

Մյուսների ձայնակցեցին և յերգը հնչուն տարածվեց գյու-  
ղի մեջ : Արողը շարժվեց և անցավ փողոցով : Յերդին փոխարինեց  
դուռնան : Ուրախ եր :

— Կարծես Մայիսի մէկն Ենք դիմավորում, — նկատեց Սահ-  
կանը :

Կոլտնտեսականներ, բանվորները տվել են ձեզ  
մեքնանակներ, պարարտացման նյութ, ոգնում են ձեզ  
կառուցել կոլխոզներ—տվեք հաց, բանջարեղին  
բանվորներին, գյուղատնտեսական հումույն, գոր-  
ծարաններին :



Կարմիր արող.

## ԲԱՄԲԱԿԻ ՀԱՄԱՐ

## 1. ԲԱՄԲԱԿԵ

Դաշտում միայն բամբակն եր մնացել:  
Բամբակը, մեր դաշտի գեղեցիկ զարդը:

Մեր հողի թանգարին բերքը :  
Բամբակը մեր հողի տվյալ սպիտակ վասկին է : Բամբակի բեր-  
քը՝ վոսկու բերք և, վոսկու հանք : Յեզի ինչպես յեռանդով ու հա-  
ճառ յըսով չմասնակցելինք մեր կոլխոզի բամբակի բերքահայտ-  
ութիւն՝ բամբակի չափաբին : . . .

Ու մենք մասնակցեցինք այդ կարևոր ու պատվավոր գործին:  
Մասնակցեցինք, ահա թէ ինչպես...

## 2. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

Մեկ որ, դասից հետո դպրոցի աշխակրառության ընթանությունը յեղագիտության մասնակցությամբ:

— Ըսկերներ, — ժողովը բաց անելով սկսեց մեր աշխարհագոյն առաջադիմությանը, — զիտեք, վոր մենք, մեր զպոցի վարչության և աշխարհացի միջոցով պայմանագիր հնք կնքել մեր կութագի վարչության հետ։ Այդ պայմանագրի կետերից մեկն այն է, վոր մենք մասնակցենք կոլլացի բամբակի չափաքին։ Այդ կետը մենք հենց վաղը պիտի կստարենք։

Հայոց կանոնը պահպանութեան վեց տարիում էմ  
Հայոց, ընկերների, խոսքը ձեզ եմ տալիս, բայց իմողը բռնմ եմ  
յիշեաբ ու բարակի չխօսեալ, այլ կոնկը եաւ առաջարկություններ  
առնել :

Սամասնի խոսքից Հետո անմիջապես սկսվեց թեթև աղջուկ, վորք հեռացնեաւ բարձրանում էր բայց Սամասնը զանգահարելով մերժացնում ու դադարեցնում էր աղջուկը: Խրաբ յետելից վեր բարձրացան ատանյալ ձեռքեր: Հետոքքիր և լուրջ հարցեր: Շա- տերին իրենց կողքի ընկերոջ Հետ, կոմացուկ, հազիվ լսելի ճայնով խոսում, խորհրդակցում եղին այն մասին, թե իրենք ի՞նչ են մտա- ծում և ի՞նչ առաջարրություններ են անելու:

— Ընկերներ, — ձայնի լրավունք ստանալով առաջինը խոսեց  
պիոներ Հայկուշը, վոր աշխորհը զգի ակտիվ անդամներից, եր, —  
տղում էմ ասել, վոր մեր պայմանագրի այդ կետը չառ մեծ նշա-  
նակութուն ունի մեզ համար... յես յիրկար չեմ խոսում, ընկեր-

ներ, առաջարկում եմ, վոր մենք աշխատանքը լավ կարժակեր-  
սենք, բոլորս ել մինչև վերջը մասնակցենք: Իմ կարծիքով առե-  
նազմավորը—դա կարգապահությունն ե և մեկ ել են, վոր պետք  
ե հարցածային աշխատենք, վոր ժամանակին վերջացնենք...

իհարկե, Հայկուշը ճիշտ եր ասում: Շատ խոսդներ նրա ասածը պնդեցին և ուրիշ հավելումներ արին:

— Աշխատանքը պիտի տանենք բրիդադներով :

— Եղ բավարկան չե . բրիգադները թող մեկը մյուսին ուղարցման կանչեն , թե ո՞վ լավ կաշխատի և զուտ կվերջացնի իրեն հանձնված մասը :

— Բնիկենե՛ր, նոր բրիգադներ կազմելու կարիք չկա: Արդեն ամեն մի խմբում 7—8 բրիգադներ կան, թող նրանք հենց . . . :

— Ճիշտ է, ճիշտ է, — ճայն տվին տեղերից, — լով է ասում Սուսը:

— Մի բան ել յես ասեմ, — ձայն վերցրեց պիտուեր Լևանն զվորին յերդչուհի ելինք ասում լավ յերգելու համար, — Հա՛ր, ըստ կերներ, եղ բոլորը լավ ե, ինչ վոր ասին մյուս ընկերները, յես ել եմ համաձայն, բայց եղ բոլորի հետ լավ չե՞ լինի, վոր մինչ լավ շաբթէրով գնաննք ու յերգեր ել ասենք...

— Հա, հա — ճիշտ ե... յավ ե... — չորս կողմից ձայն տվին:

— Լա՛վ, ընկերնե՛ր, — զանգահարելով խռանել սկսեց և ընդհատեց մյուսներին նախազահ Սամսոնը: — Կարծում եմ, վոր եղանակում մոքի ճայն չենք տա, արդեն պարզ է:

Հետո նա միացնելով բոլոր ընկերների առաջարկությունները, ձևակերպեց և քվեարկեց.

— Ա՞վ ե համաձայն այս առաջարկություններին, թող ձեռքբարձրացնի, — ասաց նա: Այս անդամ ձեռքբերի ավելի խիստ անտառը բարձրացավ. ձեռքեր, վոր կարծես նրա համար ե յին բարձրացել վոր ասեն:

— ՄԵՆՔ ՄԻշտ ԱՊԱՌԱԿԱԿ ԻՆՔ՝ ՄԵԽԱՍՏԱՆՔԻ Ու ԱԼԱՐՔԱՐԻ ՀԱ-  
ԺԱՄ :

Այս, մենք պատրաստ ենք և հենց դրա համար ենք ուղղութեամբ:

### Յ. ՎԱՂ ԱՌԱՎՈՏՅԱՆ ԴՊՐՈՅԻ ԲԱԿՈՒՄ

Մյուս որը վաղ առավոտյան համարվեցինք դպրոցի բակում և  
Աջնանային թարմ առավոտ եք: Արևի առաջին ճառադայթնե-  
ւ գեռ նոր ելին հասել Ալարդյազի կատարներին: Յերկնքի վրա

սեղ-տեղ սմբկի՝ մոխրավլուն ու ճեղմակ պատառներ կային, վորոնք արևածագի լույսով վառվել եյին։ Գյուղը վաղուց եր զարթնել։ Զորս կողմից լովում եր աշխատանքի նախաղաւրաստության ու աշխատանքի աղմուկը։

Դեղեցիկ եր արդ առավոտը։

Մենք վերցրել եյինք նախաճաշի ու ճաշի վորոշ պաշար։

Մեր աշխորհը լուսանկարչական արտելը չեր մոռացել մերժնել նկարչական ապարատը՝ մեզ բոլորիս և առանձին լավագույն հարվածային բրիգադներին, չոնաք անելիս, նկարելու համար։ Մեր ուսուցիչներից մեկի չնորհիվ, մի քանի բնկերներ՝ Գարեգինը, Սուրենը, Վաղոն, Համոն, Սիրուշը և մյուսները բավական սովորել եյին նկարել։

Կազմ ու պատրաստ սպասում եյինք, յեր Փիզկուլով հրահանիչ՝ Գառնիիլը, բարձր ձայնով հրահանգեց։

— Շապքիիի……

Հենդ բովե չանցած բոլորս չարօւմ կանգնած եյինք՝ ըստ խմբերի։ Մեկ յերկու բովեյում, աշխորհը վիճակագրական արտելի անդամները բացակաների ու ներկաների հաշվառում կատարեցին։

— Զգապա՛սուն կանչեց Փիզկուլով հրահանգիչ Գառնիիլը, յեր հաշվառումը վերջացել եր արդեն։

— Քայլ առաջ մա՛րչ……

Լովեց մեր վոտների համաշաբ դոփյունը, վորին չափավորում եր հրահանգիչ ուժեղ, հրահանգող ձայնը—

— Մեկ, յերկու, մեկ……

— Զախի ձախի մեկ, յերկու, մեկ……

Լենայի զիլ ու հնչուն ձախով սկալած յերդին մասնակցում եյին բոլորը։ Մենք՝ աշխատանքի ու կոմի յերգերով մողջունեցինք արդ որիս առավոտը։ Խոկ մեղմից առաջ, գեռ վաղ լուսարացից սկսած, գյուղին մուտքել ու հեռու կոլլազային արտերում, որակտորները՝ հարվածային որակտորիստների ղեկավարությամբ՝ աշխանացանի պլաններն եյին կառարում՝ ակոս տու առու……

#### 4. ՓՈԽՎՈՒՄ Ե ՄԵՐ ԴԱՇՏԻ ԴԵՄՔԸ

Ինչուս փոխիւն եր մեր գյուղի դաշտի կերպարանքը, դեմքը…… Յեկ դեռ ելի պետք է մոխիլի։

Մի առի առաջ ուրիշ եր մեր դաշտի տեսքը……

Այն ժամանակ անհատական, մաս-մաս, իրարից անջատ հազարարներն եյին իշխում մեր դաշտում։

Վերջին յերկու տարում բավական փոխվել ենա։ Փոխվել ե՝ բայց վոչ հետությամբ։ Փոխվել ե՝ համառ



աշխատանքով և թշնամու դեմ տարած անհաջող կովով……

Հիմի սկսում և իշխել կոլլազային սեփականությունը, համարնականը։

Անհատական հողակառութիւնի վերաբեն՝ ծովի պես անսահման, լայն արտեր :

Մեր դաշտի հողը՝ բամբակի, սպիտակ վարդի, սպիտակ վուկու հող և և վոչ թե ցողենի, գարու :

Դրա համար ե, վոր տարեցտարի, բամբակենին արագ տարածում և մեր կոլեկտիվացող դաշտում :

Յեվ պիտի տարածմի. բամբակն է մեր դաշտի ապագան :

Կուլակի, տերտերի, դաշնակի ու նախառաշարժումքի դիմադրությունը կոչնչանա, կարճ ժամանակից հետո, մեր դաշտից կջնջեն բոլոր սահմանները : Այն ժամանակ մեր դաշտը կլինի բամբակի համատարած դաշտ :

Այս, միայն բամբակի :

### 5. ՀԱՐՎԱՆԱՑԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Գյուղից դուրս գալով, կես ժամից հետո, արդեն կոլխոզի բամբակի արտումն ելինք : Ամեն ինչ պատրաստ եր : Կոլխոզից 5-ն հոգի բերել ելին մէշուկներ՝ մեծ ու փոքր, վեղրոներ, զողոցներ և այլն, ինչ վոր հարկավոր եր բամբակ հալաքելու համար :

Մեր առջև փուլած եր կոլխոզի վարդերի արտը—սպիտակ վոսկին՝ բացված բամբակը : Մի քանի ժամում մենք պիտի ինամբ քովի հալաքելինք այդ սմբողջ արտի թանգարին բերքը :

Աշխատանքի, ալելի ճիշտ բամբակի արտի բաժանում կատարեցինք մեր 36 բրիդադների միջև : Բրիդադները բարկացած ելին 5-ական հողուց : Ամեն մի բրիդադի կցված եր մեկ ուսուցիչ : Այս, մեր ուսուցիչներն ել մեղ հետ յեկել ելին չանաքի :

Ինչպես վորոշված եր, այնպես ել յեղավ.—բրիդադներն իրար հետ սոցմրցման մեջ մտան և իրենց հայտարարեցին հարվածային՝ հանձնված աշխատանքը ժամանակից շուտ կատարելու :

Արտի մի գլխից բրիդադները մի ընդհանուր զղթա կազմեցին : Ամբողջ արտը զրոհի տակ եր՝ մինչև աջ և ձախ անկյունները :

Գրոհն սկսվեց : Մենք հարվածային յեռանգով և լուրջ ինամբով, վորպես թանգարին բերք, հալաքում ելինք կոլխոզի արտի սպիտակ վոսկին :

Ամոթ չե՞ր են բրիդադներն, վոր յետ մնար :

Պատանի մարտիկներ ելինք :

Պատանի ննտուղիաստներ՝ կոլխոզի արտում : Կովում ելինք բամբակի համար, կոլխոզի ամբացման համար, տեքստիլի իլիկ-ների տեմպի համար :

Յերկու ժամ հետո, արտի կեսումն ելինք : Մի ժամում դեռ մնում ելին կանդնած սպիտակ-վարդազգութ բամբակեները, իսկ մյուս կեսը, մեր հետեւմ՝ շականակաղույն մերկ բամբակնու ցողուններն ելին մնացել միայն, իսկ նրանց միջից բարձրացել ելին բամբակով լիքը մէշոկներ, բարդաններ :

Մենք աեւնում ելինք մեր աշխատանքի արդյունքը և վողեարկում նոր յեռանդով : Մեր վողեարկությունն ու յեռանդը շատ լավ արտահայտվեց մեր գպրոցի վարիչի՝ հենց այնուղ ստեղծած՝ այս ութ տողանի վոտանավորում .—

Դե, ընկերներ,

Մի գրոհ ել,

Մաքրենք արտի

Մյուս կեն ել :

Դե, ընկերներ,

Մի գրոհ ել,

Յեռանդ ու ուժ

Զինայինք :

Յեզ իսկապես, հետեւյցալ յերկու ժամը գեռ ըլրացած, ՅԵ հարվածային բրիդադների ընդհանուր գրոհով մաքրեցինք արտի մընացած կեն ել :

Այս յերբ վերջացրինք, 15 րոպէ ընդհանուր հանգստի դաշտրից հետո, պատրաստվում ելինք վերադառնալ տուն : Հենց այդ ժամանակ, աշխատացրի նախագահ Սամանը, վոր բավական վարպետ եր գեղեցիկ ու հարմար լողունզներ կազմելու դործում, այս անդամ հնարեց այս լողունզը մեր այդ որդա աշխատանքի առթիվ :

«Մի արտ բամբակ մեկ որում,

Հնդամ բակը 4 տարում» :

Նորից ընդհանուր շարք, նորից քայլերդ հանապարհին :

Մենք քայլում ու յերկում ելինք, վոր կոմի ճակատից հաղթանակով վերադարձող զինվորներ . . .

Այս, մենք ել յեկել հաղթանակով վերադառնում—

ԲԱՄԲԱԿԻ ԱՆԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՈՒ ԿՈԼԵԿՏԻՎԱՑԱՑՈՒՆ ՃԱԿԱՑԻՑ

ԱՅՈՒՐ ՎԵՆԿԱՐԻ

Սեպտեմբերի 19, 1931 թ.

Երեկան

## ԼԵԴԻ ԱՍՏՈՐԻ ԱՆՀԱՋՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Բերնարդ Շոռուն ԽՍՀՄ-ի մասին Անդլիայում ճշմարտություն եր ասում, լեզվ Աստորը հակառակն եր պատմում ԽՍՀՄ-ի մասին: Բերնարդ Շոռուն ԽՍՀՄ յեկավ համոզվելու, վոր ԽՍՀՄ-ում ռեցիսալիզմը հաղթական քայլեր ե անում: Լեզվ Աստորը ճգնում եր ԽՍՀՄ-ում «սարսափներ» ճարելու, վորոնց մասին այնքան բառ խոսում են Անդլիայում: Սակայն, մենք չգիտենք՝ նա ի՞նչ է պատմելու Անդլիայում... փաստն այն ե, վոր հակառակ իր սպասածի ԽՍՀՄ-ում «սարսափներ» չճարվեցին: Նա ամեն հարժարություն ուներ իր աչքերով ամեն մի բան տեսնելու, ականջներով լսելու: Մոռկլայի մոտ դտնվող գյուղերից մեկում լեզվ Աստորը՝ հարցնում ե կոմունայի անդամ Մարիայից.

— Վոնց եք ապրում, յերեխ շատ եք աշխատում և ապրուածն ել դժվար ե:

— Կոչինչ լավ ենք ապրում. մեր կոմունայում գործերը լավ են գնում, պատասխանում ե Մարիան:

Լեզվ. — Չես հարցնում եմ, թե դո՞ւք ինչպես եք ապրում, վոչ թե կոմունան:

Մարիա. — Ճեթե կոմունայի գործերը լավ են, նշանակում ե, վոր իմ գործերն ել լավ են: Զե վո՞ր մենք բոլորս ել կոմունայի անդամ ենք:

Լեզվ. — Դա ճիշտ չե, ճիշտ չե: Զեզ ներշնչում են. յեթե մարդ իր մասին չի հոգում, վոչինչ ել չի ստանում:

Մարիա. — Հենց այն ժամանակ, յերբ մենք միայն մեր մասին ել ինք մտածում, վաս ելինք ապրում, ապրուածը դժվար եր: Բոլորովին այլ բան ե այժմ: Վո՞չ, կոլեկտիվն ամեն տեղ ել հարկավոր ե:

Լեզվ. — Հասկացեք. կոլեկտիվը ճնշում ե, հնարավորություն չի տալիս մարդուս ապրել, ինչպես ինքն ե ցանկանում: Ահա յես ապրում եմ ինքնուրույն: Ուր ուզում են գնում եմ, ինչ ուզում եմ անում եմ:

Մարիա. — Վորովհետեւ դուք հարուստ եք: Իսկ ձեր բանվորները:

Լեզվ. — Մեր բանվորները լավ են ապրում, նրանք գրագետ են և կոլտուրական:

Մարիա. — Զեմ կարծում, թե լավ ապրելիս լինեն: Բա ի՞նչ կառեց դործաղութիների մասին, վոր մեզ մոտ չկա: Յերբ հեղափո-

խություն կլինի ձեզ մոտ, այն ժամանակ կիմանանք, թե ինչ-պես եյին ապրում ձեր բանվորները:

Լեզվ. — Մեզ մոտ հեղափոխություն չի լինի:

Մարիա. — Ի՞նչ եք ասում. կլինի, կլինի, անպայման կլինի, այն ել վո՞նց:

Շատ մարդկանց հետ խոսեց լեզվ Աստորը, բայց իր ցանկացածը չտեսավ, չըսեց:

Նա տեսավ, թե ինչպես բանվորներն ու գյուղացիները լծված ենուազիազմով, աշխատում են սոցիալիզմ կառուցելու համար: Վերջն ել հիանթափոլած եր, վոր ԽՍՀՄ-ում բոլորն ել աշխատում են, դուհենց աշխատանքից:

Տեսնենք ի՞նչ ե պատմելու լեզվ Աստորն Անդլիայում ԽՍՀՄ-ի մասին:

## ԿԱՏԱՐԵԼ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԵՆՏԿՈՄԻ ՎԱՐՈՇՈՒՄԸ

1. Սկզբանեալիքի 1-ից ապահովել բոլոր դպրոցները տաք նախաձաշտի:

2. Աժանդակել դպրոցներին արտագրության հետ կապվելու գործում:

3. Շուտափույթ ավարտել դպրոցական կիսատ մեացած չենք էրի կառաւցումը և դպրոցների ու ինվինտարի վերահոգումը:

4. Միջօցներ ձեռք տունել գոլրոցներն ապահովելու ուսումնական-լաբորատորական իրերով:

5. Աջաղջություններում յեղած և չողապործված գործիքներն ու մեքենաները (դադչյաններ) հանձնել դպրոցին՝ լաբորատորիա կազմակերպելու համար:

## ԴՐՈՅԸ ՅԵՎ ԱՇԽԱՆԱՑՄԱՆԸ

Մեզ ժողով հոկա չափերով առաջ և վճում կուեկտիվացումը, Հայաստանի չքաղաք, միջակ տնաենությունների 36%-ը չնդրկված են կումանեսություններում: Գյուղը վերակառուցվում է: Գյուղի գեմքը փոխվում է, հետամնաց, խավար դրազը, վորոնզի մշտական հյուրը աշքատությունը, սովոր ու հետամնացություններ, վերափոխվում է սոցիալիստական դյուզի: Գյուղը մեքենացվում է, լուսավորվում է:

Կոմունիստական կուսակցության վեկավարությամբ պլուտոսի աշխարհ նոր աշխարհ եւ սուեդում—սոցիալիստական աշխարհ:

Դպրոցը հետ չպետք եւ մնա վերակառուցված դյուզի աշխատանքերից, ինչպես մինչև այժմ ել հետ չի մնացել: Նա պետք եւ մասնակցի դյուզի բոլոր աշխատանքներին: Դպրոցը պարբանագիր է կնքել կուեկտիվ տնաենության հետ ոժանդակելու իրեն դպրոցում պոլիտիկակի կրթություն մտցնելու համար: Մեր դպրոցը

պոլիտիկական դպրոց է, մեր պալըցը դործնական դպրոց է, կապված անսուլանի հետ: Մենք պետք եւ մասնակցենք բայլշեկիյան բոլոր կամունիստներին:

## ԲԱՅԼՇԵՎԻԿՑԱՆ 2-ՐԴ ԱՇԽԱՆԱՑՄԱՆԸ

Արգեն սկսվել եւ աշխանացանը: Այս աշխանացանը բայլշեկիյան 2-րդ աշխանացանն է: Սա նշանակում է, վոր այս յերկրությունը անգամն է, վոր բայլշեկիների զեկուլարությամբ, բանվորների ուժանգակությամբ, մենք զուրու ենք դաշտս դաշտը կալեկտիվ կերպով, համախմբված, կարգակերպված—կատարելու աշխանացանը: Դրա ընթացքում գնուական դեր ունեն կատարելու խորհրդային և կոլեկտիվ տնաենությունները, իրենց հետեւից տանելով մենատնահատելերին:

Աշխանացանի համար նախորոք պետք է հողը պատրաստենք:

ա) Աշխանը պետք է հողը վարել գութանով (յիթե արակտոր կա՝ արակտորով): Գութանավարի առավելությունը շատ մեծ է: Գութանավարի հողը ավելի լավ է մշակվում, գութանը ավելի խորն է վարում, վորով ստորին չերտերը հանվում է յերես, իսկ յերեսի չերտերը ընկնում է տակը. դժունով բոլոր մոլախոտերը ընկնում են հողի տակը և փառում, պարագանում հողը: Մյուս կողմից անձրեն ու ձյունը ծծվելով հողի մեջ, փափկացնում են հողը:

Աշխանը վարվող արտօր, հաջորդ աշխանը ցանելու հոմար կոչվում է սև ցեղ: Այս ցեղը բերքը ավելացնում է 1 և  $\frac{1}{2}$  տեսամ:

## ՍԵՐՄԻ ԶՏՈՒՄԸ

«Ինչ կցանես, այն ել կհնձես»—ասում է հին առածը: Լավ թերք ստանալու համար պետք եւ սերմը լավ լինի, մաքուր և զրտված: Սերմացուն պետք եւ լինի առողջ, խոշոր և ծանր, նա իր մեջ չպետք եւ պարունակի զանազան մոլախոտերի սերմեր, ջարգված հատիկներ և կողմնակի աղը (հող, քար և այլն):

Սերմը պետք եւ զտել սերմացախիչ մեքենայով: Նախքան սերմագոտիչ մեքենայով դտելը, սերմացուն պետք եւ քամհարով մաքրել հաղից, մոլախոտերի սերմերից, հարդից և այլն: Սերմացախը հատիկները բաժանում եւ խոշոր ու մանր տեսակների և տունձնացնում եւ ավելացրդ մասերը:

Նկատի ունենալով սերմաղտման կարևոր նշանակությունը  
բերքի բարձրացման տեսակետից, Հայաստանի ժողկոմիորհը վո-  
րոշում ունի, վոր սերմերի զտումը բոլորի համար պարտադիր է:



Ռելիեֆայիշ մեքենան.

Ներկայումս լիորհը այլ հայտնի չեղանակում այնքան սերմաղտիչ մե-  
քենա կա, վոր միանդամայն ապահովում և սերմի զտումը: Պետք է  
դուք բոլոր սերմերը:

## ՄԵՐՄԻ ԱԽՏԱՀԱՆՈՒՄԸ

Յորենի, պարու և այլ հատիկների սերմերը, հաճախ վարակ-  
վում են մրիկ կոչված սնկային հիվանդությամբ, վորի հետեան-  
ուրի բերքատվությունը սաստիկ ընկնում է:

Այս հիվանդությամբ վարակված հասկերն սկսում են սեփանակ,  
հատիկները լցվում են սեփ փոշիով: Մրիկ հիվանդությունից ա-  
զատվելու համար ցանելուց առաջ պետք է սերմացուն ափտահա-  
նել, այսինքն մեռցնել, վոչնչացնել այն հատիկները, վորոնք վա-  
րուկված են այդ հիվանդությամբ:

Այս աշխատանքը բոլոր կոլեկտիվ անտեսություններում կա-  
տարգում է. պետք է ոգնել դրանց:

## ԱՇԱՆԱՑԱՆԻ ԱՅԼ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Բացի սրանցից աշխանացանը պահանջում է մի շարք այլ աշ-  
խատանքներ: ա) Գյուղը կարող է ունենալ մեկ սերմաղտիչ մեքե-  
նա, մինչդեռ գյուղի սերմի ամբարները կարող են հետո դանվել.  
Հարկավոր է այդ սերմը կենտրոնացնել սերմաղտիչ մեքենայի  
մոտ: բ) Սերմահավաքման, սերմաղտման, սերմերի տեղափոխ-  
ման, սերմերի տեսակավորման համար հարկավոր են պարկեր  
(մեշտեներ): Հաճախ սերմերը մնում են աժբարներում, վորովհե-  
տեմ պարկ չի լինում: Հարկավոր է հաշվառման յենթարկել գյու-  
ղի, կոլտնտեսության ունեցած պարկերը, այդպիսիները կենտրո-  
նացնել սերմի ամբարների և սերմաղտիչի մոտ: դ) Ցեղած բողոք  
պարկերը կարող են նոր չլինել. Հարկավոր է ծակ պարկերը հանձ-  
նել կարկառողներին:

## ՄԵՐ ԴՊՐՈՑԸ

Ընկերներ, — չկարծեք թե այս բոլորը յս վերացականորեն  
որատմեցի: Այս ամենը մենք կատարել ենք մեր դպրոցում: ահա  
Հոկտեմբեր ամսին մեր կոլտնտեսության դյուզանհուսոց  
ինչպես:

Դպրոցում գեկուցեց՝ «Դպրոցը և աշխանացանը» նյութի մասին:  
Զեկուցումից հետո մենք բաժանվեցինք 6 բրիգադայի: Ամեն մի  
խումբ իրեն հայտարարեց մի հարվածային բրիգադա: Լիպարի-  
ովն ու Ալբերտը վերցրեցին 2 առանձին խմբեր — գյուղում յեղած

բոլոր պարկերն հավաքելու, սերմերը քաշելու և պարկերը կարկատելու պարտականությամբ։ Արփեկն ու Դավումքանը վերցրին յերկրորդ յերկու խմբերը՝ կատարելու սերմի ախտահանումը և գյուղի յեզած սայշերը կենտրոնացնելու (աղբ տեղափոխելու համար) պարտականությունը։ Հակոբն ու Մայրանուշ Արամյանը վերցրին սերմի զոման աշխատանքները։

Բոլոր բրիգագներն իրենց հայտարարեցին հարվածային, միայնց հետ կապեցին սոցմրցման պայմանագրեր։ Սկսեցինք աշխատանքը, մեր դպրոցի կոմսոմոլի բջիջի դեկադարությամբ։

## ԱՇԱՆԱՅԱՆԻ ՀԱՅՈՂ ԿԱՏԱՐՈՒՄԸ ՀԱՐՎԱԾ Ե ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ԹՇՆԱՄՈՒՆ.

Կուլակներն աշխատում են, վոր միշտ անհաջող դնա մեր դործը։ Նրանք խանդաբում են սոցխալիզմի շնարարությամբ։ Ամեն կերպ աշխատում են, վորպիսդի վիճեցնեն մեր պլանները։ Նրանք աշխատում են գյուղը սովոր, կարիքի մէջ պահել, վորութեալի գյուղացին միշտ դնա շահագործվելու իրենց մոռ։ Հառկանալի յի, վոր աշխատացանի գործն ել նրանք կուղենան խանդաբել։

Մենք պետք ե մեր աշխատանքների ընթացքում հասկացնենք չքավոր, միջակ տնտեսություններին աշխատացանի նշանակությունը, ոժանդակենք նրանց՝ կոլտնտեսություններին և գրա հետ միասին պայքարենք գասակարգացյին թշնամու գեմ։ Կուլակները ամեն կերպ կախատեն թաղթնել սերմը, մեջոկները, սերմերը չգտել և այն։ Մենք պետք ե հայտնաբերենք այդ բոլորը։

Աշխատացանի հաջող կատարումը— գյուղի սոցիալիստական շինարարության հաջող զործն ե և հարված և գասակարգացյին թշնամուն։

Աւեման կատարենք այդ աշխատանքը հաջող։ Թող սոցմրցման գուրս գան գպրոցները։

Հ. 1.


## ԼԻՆԵՆՔ ՀԱՐՎԱԾԱՅԻՆ.

Դպրոցական պարապումներն արդեն սկսվել են։ Մեզանից յուրաքանչյուրը պետք ե հիշի, վոր գպրոցական աշխատանքներում պետք ե հարվածային լինենք։

Դպրոցը կազմում ե իր աշխատանքների ծրագիրը. դպրոցա-

կանները պետք ե պայքարեն, վոր այդ ծրագիրը լիվ չափով երագործվի։ Մենք չառ պետք ե սովորենք և լավ պետք ե սովորենք, վոր կարսղանքը վտիպարինողներ դառնալ սոցիալիզմ կառուցելու համար։

Գործաբանում բանվորները պայքարում են պարապուրդների դեմ, պայքարում են աննպատակ թափառելու դեմ, մենք ել պետք ե պայքարենք զպրոցում տեղի ունեցող պարապուրդների դեմ։



Գործաբան։

Յուրաքանչյուր բաց թողած որ— դա մի ճեղքվածք ե զպրոցի աշխատանքների կյանքում։

Աւժեղները պետք ե ողնեն թույլերին, իսկ վերջիններս հառնեն ուժեղներին։ Տարեսկզբից այնպիս պետք ե կազմակերպենք աշխատանքները, վոր հետամնացությունը վերանցնենք։

Այս ատրին Յ-րդ վճարկան տարին ե։ Գործաբաններում բանվորները և կոլտնտեսություններում կոլտնտեսականները աշխատում են հարվածային կերպով, բարձրացնում են արտադրությունը, պայքարում են արտադրության վրակը բարձրացնելու համար։

Մենք ել պետք ե պայքարենք դպրոցի աշխատանքները բարձրացնելու համար, աշխատանքների վորակը լավացնելու համար։

Աշխատենք հարվածային կերպով, կնքենք սոցմրցման պայմանագիր, վորակնեղի դիմուլիքներով ու կարողանանք սիրապներել տեխնիկային։

Խ.

## ԱՌԱՋԻՆ ՈՐԸ ԴՊՐՈՑՈՒՄ. ՄԵՐ ՑՈՒՑԱՆԴԱԿԵՍԼ.

Անզոտեմբերի մեկը պիտոներական կազմակերպությունը հայտաբարել եր հարվածային որ՝ դպրոց հավաքվելու համար։

Առաջոտյան ժամի 9-ին յերեխաներն արդեն հավաքվել ենին։ Եւանակված եր դպրոցական ընդհանուր ժողով, հետո հանդեռ։

Ժողովին ներկա ենին կոլտնտեսության վարչության նախադաշտ, գյուղխորհրդի նախադաշտ, կոմիտեի և կոմոմոլի բնիքի բարուղարներն ու ծնողներից շատերը։ Քաղաքից յեկել եր չեփ դոքարանի ներկայացուցիչը։

Դպրոցի վարիչը զեկուցեց, վոր դպրոցը պատրաստ ե 1931/32 ուսման տարվա համար։

Գյուղի բոլոր յերեխաներն ընդգրկված են դպրոցում։ Պարտադիր ուսումը իրականացվում է 100 տոկոսով։ Յերրորդ և չորրորդ թիմերի աշակերտության միջոցով ցուցակադրված են դյուզի բոլոր անդրագետները— 17 տարեկանից մինչև 50-ը, չորրորդ թումրը փոխադրվում է հինգերորդ, անցնում ենք յոթնամյա կրթությանը, հիմք ե դրված պոլիտեխնիկական կրթությանը, ունենք աշխատանքային անկյուններ, ուր զանազան գործիքներ և նյութեր կան՝ ատաղձագործական, փականագործական, կազմարարական, գյուղատնտեսական աշխատանքների համար։ Զեռք ենք բերել փոքրիկ ֆիզիկա-քիմիական լաբորատորիա և այլն և այլն։

Կոլտնտեսության նախադաշտ հիշեցրեց, վոր պայմանագիր և կնքմած դպրոցի և կոլտնտեսության միջև, վորի հիման վրա աշակերտները պետք ե մասնակցեն կոլտնտեսության աշխատանքներին— բանջարանոցում, բերքահամլաքին, արհեստանոցներում։ Կոլտնտեսությունն իր կողմից խոստանում է բարելավել աշխատների կենցաղը և սնունդը, խոստանում է ուժեղացնել դպրոցի լաբորատորիաները։

Ժողովը լուսմ է ամառային աշխատանքների մասին։

Ժողովից հետո հանդեռ յեղակ։ յերգեցինք, նվազեցինք, վուանագործներ ալբումանեցինք, պատմեցինք ամռան կյանքից։

Վերջը աշակերտները ներկայացրին իրենց ամառավա կատարած աշխատանքների արդյունքները՝ նկարներ, եքսպոնատներ։ Կյանքը բոլոր դասավորեցինք, վոր չուտով ամառավա կատարած աշխատանքների ցուցահանդես կազմակերպենք։

## ԱՇԽԱՏԱՆՔԻ ՍԵՆՅԱԿ.

Դա ի՞նչ նոր սենյակ է միջանցքի մոտ։ Մի քանի տարի յի, վար պատերը կային, բայց առաստաղ չկար։ Այս ամառ դյումիորհությունը ծածկեց, հատակը տախտակամածեց։ Դա մեր աշխատանքի սենյակն է լինելու։ Կոլտնտեսության հյուսնոցի վարպետները տախտակներից 4 փոքր դապդյահ պատրաստեցին։ Պատերին փոքրիկ պահարաններ և դարակներ ենք ամրացրել. այնուեղ հագաքել ենք զանազան գործիքներ՝ ունելիք, ատվյորհու, քանոն, անկյունաչափ, սղոց, ծալովի մետր, խարտոց, մուրճ, 2 ուրագ, փոքր ու մեծ ոնդաներ, թիթեղ, կտրելու մկրատ և այլն։

Մի անկյունում դարսել ենք զանազան նյութեր՝ յերկաթարարի փաթթիթներ, տախտակ, թուղթ, ստվարաթուղթ, զանազան մեծության մեխեր, սոսինձ, ներկեր։

Դասարանների անկյուններում և պահարաններում թափթթված իրերը, վոր մենք պատրաստել ենինք անցյալ տարի, բերել ենք ու դասավորել այս սենյակում։ Այստեղ գուք կաեսնեք մեր ուսարաստած զանազան իրավալիքներ— թղթեց, ստվարաթղթեց, տախտակներից, կարոններից։ Այստեղ կա տրակտորի, ավտոյի, լրացրացի մողելներ։ Պատրասել ենք մեր դպրոցի մակետը։

Այդ լուսում մենք պատրաստել ենք անցյալ տարի, յերբ գեռ աշխատանքի սենյակ չունեյինք։

Հիմա յերեղի դուք կհարցնեք, թե՞ վորտեղից ենք ձեռք բերել կործիքները։

Դրա պատասխանն ել տամ։ Մի քանի բան մենք դեռ անցյալ տարվանից ունեյինք, վոր բերել ենին մեծ մասմբ աշակերտներն իրենք՝ զանակ, մուրճ, փոքրիկ սղոց։ Մնացածը ձեռք բերենք այս տարի։ Գործիքների մի մասը տիեզեցին կոլտնտեսության արհեստանոցները՝ դարբնոցը և հյուսնոցը։ Մյուս մասը— բերեց մեխանիկական գործարանից մեր գյուղ յեկած բանվորական բրիգադը։ Պահանջունակ դատարկ բանկաներ բերել են աշակերտները։

Շուտով կսկսվեն դպրոցի պարագմունքները . դասարաններում գտն կանենք, իսկ այսուեղ մենք աշխատել կառվորենք:

Արդեն վարչ աշխատանքներ տարել ենք: Մասնակցել ենք դպրոցի և ինվենտարի վերանորոգման աշխատանքներին: 15 սեպտեմբերին, նստարան նորոգեցինք: Անցյալ տարիներում զբանք կամ փշանում ելին, կամ տալիս ելին մասնավոր վարպետներին նորոգելու: Նորոգեցինք պատուհանները, կուրած առակիները դցիցինք:

Մենք առաջարկում ենք մյուս դպրոցների չորրորդ և յերրորդ խմբերին ել սառուղել իրենց աշխատանքի անկյունները, ուսուցչի հետ կազմել պահանջվող գործիքների ցուցակը, վարոշել վո'րտեղ և ուժ դիմել գործիքներ և նյութեր ճեռք բերելու համար, ու այդ աշխատանքները կատարելու համար վորոշ ժամանակ տալ:

Մենք վասնել ենք, թէ՛ մեր պատրանական և թէ՛ աշխատանքային սենյակի պարագմունքների ընթացքի և արդյունքների մասին պարբերաբար զբել «Ժուրնալ-դասադրքին»:

Խ.

## ԿՅԱՆՔԸ ՄԵԶ ՄՈՏ ՅԵՎ ԿԱՊԻՏԱԼԻՍԱԿԱՆ ՅԵՐԿՐՆԵՐՈՒՄ

ԻՆՉՊԵՍ ԵՅԻՆ ԱՊՐՈՒՄ ԲԱՆՎՈՐՆԵՐԸ, ՆԱԽԿԻՆ  
ԳՈՐԾԱԲԱՆՆԵՐՈՒՄ.

Կապիտալիստների և բանվորների դասակարգերը Խուսաստանից շատ առաջ կազմակերպվեցին արեվմուտքում: Ես յերկու դասկարգի առաջ զալու հենց սկզբից սկսվեց բանվոր դասակարգի ուժեղ շրհադրումը:

Բուրժուաների բոլոր յեկամուռները, բոլոր հարստությունները ստեղծվում եյին գործարաններում հաղարավոր բանվորների աշխատանքով: Բուրժուաների փողերը շատանում եյին, վորովհետեւյ բանվորները գործարաններում աշխատում եյին 12-14 ժամ:

Իսկ ինչպես եյին ապրում բանվորները:

Ամբողջ աշխարհի բանվոր դասակարգի առաջնորդ և ուսուցիչ կարլ Մարքսը և Ֆրիդրիխ նեմականը են նկարագրում Անգլիայի բանվոր դասակարգի դրույյանը XIX դարի սկզբում:

Առավոտյան հինգ և կեսին բանվորը պետք է գործարանում լինի: Յեթե նա թեկուղ յերկու բոլոր ուշանար, ամառ տուղանվում եր, իսկ յեթե 10 բոլոր ուշանար, նրան մինչև զարդարը իսկի գործարան չեն թուլնում և մի քառորդ որվա աշխատավարձը կարում են:

Գործարանում տերն որենքներ եր հրատարակում, ինչպես իր քեֆն եր տալիս:

Գլխավոր որենքներն եյին՝ աշխատավարձից կտրելը, տուղանքները, վոր դրվում եյին ամենափոքրիկ հանցանքների համար—աշխատանքի ժամանակ խոսելու, յերդելու, սուլելու, այլև ուշանալու համար:

Իսկ յեթե բանվորն սկսում եր տրտնջալ, գործարաններին առում եր նրան—ախարիք, յես հո քեզ չեմ ստիպում,— ուզում ես

դնա, ուզում ես ծառայիր: Բայց յիթե գու ծառայում ես ինձ, ուրեմն պետք է յենթարկվես իմ որենքներին:

Բանվորը պարտավոր եր նախորդոք (մի, յերկու շարաթ) զգուշացնել տիրոջը, վոր ինքը զնալու յի, իսկ տերը կարող եր ամեն բռպէ ել վոնդել նրան:

Յուզանքի փողերը շատ անդամ ենքան շատ ել լինում, վոր բանվորի աշխատավարձի համարյա կեսը նորից տիրոջ գրապանն եր զնում:

Շատ անդամ գործարանատերն իր համար խանութ եր բաց անում և ամեն տեսակ ապրանքներ պարտք եր տալիս բանվորներին, բայց շատ ավելի թանգ, քան մյուս խանութպանները: Յերբ աշխատավարձ ստանալու որը զալիս եր, բանվորը գարդը սրում համոզվում եր, վոր իր համարյա բոլոր փողերը պարտքի տեղ ե գնում: Նրա ձեռքը կոպեկներ եյին տալիս:

Այն գեալքերում, յերբ գործարանը քաղաքից դուրս եր շինվում, շատ անդամ տերը բանվորների համար բնակարաններ եր շինում: Դրանք ավելի շուտ գաղանների վորջերի եյին նման, քան մարդկանց բնակարանի: Բայց գործարանատիրոջը յեկամուտ եյին բերում: Բանվորը տեղ չուներ և կամա-ակամա, բնակարանին վճարում եր այնքան, վորքան նշանակում եր տերը: Բանվորների չուրերը վողորմելի եյին, սնունդը չնշին ու վասա:

Հասկանալի յի, վոր բանվորների մեջ տարածված եյին ամեն տեսակի հիվանդություններ: Թոքաբատը, հարինքը, մյուս վարակիչը հիվանդությունները տարեկան բազմաթիվ զոհեր եյին տանում: Հատ եյին մեռնում մանավանդ յերեխնաներ: Շատ անդամ եյին բանվորները անդամահատվում կամ մեռնում դորժարաններում:

Այն ժամանակվա բանաստեղծ թոմաս Հուգը այսպես է զրել անդիտական բանվորի կյանքի մասին.

Աշխատանքս—անսահման իիստ և,  
Նորերս փալաս: Անկյունում հարդակույտ,  
Ու չորացած հացի կոռոր.  
Աթոռակ ու սեղան—մերկ հատակին:

## ԿԱՌԱ ԱՇԽԱՏԱՆՔԸ ԳՈՐԾԱՐԱՆՈՒՄ.

Մի Փերմեր—գյուղացի Զեկը— իրեն գործով Մանչեստր պարզ, վորոշեց այցելել իր հայրենակից թոմին, վոր վաղուց այդ-տեղ եր ապրում, և տեսնել, թե վանց և ապրում: Թոմի բնակա-

բանը (ինչպես հետո պատմում եր Զեկը) նա հազիվ դառավ քառա-քի ծայրում:

Յերբ Զեկը մտավ իրեն ցույց տված մութ ներքնատոնք, նա մի զարմանալի բան տեսավ:

Յուրու, մութ ու խոնավ սենյակում թոմը նստել եր կըառէ մոտ և կանացի գուլզա յեր կարկատում:

Զեկին նկատելով, թոմը վեր թռավ և աշխատեց թագցնել իր աշխատանքը, բայց Զեկն արդեն բոլորը տեսավ, և աղաղակեց:

— Գրողը տանի, թոմ, եղ ի՞նչ ես անում: Ո՞ւր ե կինդ: Դու եղ ի՞նչ գործի յես:

Թոմը ոսատիկ չփոթվեց ու ասաց.

— Եեղծ կինս գործարանումն ե: Նա գնում է առավոտվա ժամը 6-ին և աշխատում է մինչև իրիկվա ժամը 8-ը: Գործարանից հոգնած վերադառնալով, նա հազիվ է կանդնում վոտքի վրա և չի կարողանում տան գործերն անել: Դրա համար ել յես ստիպված եմ լինում նրա տեղ անել, ինչ վոր կարողանում են: Յես դործ չունեմ, յերեք տարի յի անգործ եմ և դժվար թե ամբողջ կյանքումս ել գործ գտնեմ:

Թոմը գառը շաց յեղավ: Յերկու հայրենակիցների հանդիպումը տիսուր եր:

— Այս, թանկագին Զեկ, — շարունակեց թոմը, — այստեղերում կանանց համար բավական գործ կա, բայց տղամարդկանց համար — չկա: Փողոցում հազար մանեթ գտնելը ավելի հեշտ է, քան զործ ճարելը: Յես պետք է մնամ տանը, նայեմ յերեխաներին, հաց թխեմ, մման լիանամ:

Շատ տիսուր բաներ իմացավ Զեկը թոմի փոքրիկ սենյակում: Ինչու թոմն անդորդ եր:

Գործարանների, մանավանդ գործվածքների, տերե՛րը մեջենաներ մացնելուց հետո սկսեցին ավելի սիրով կանանց վարձել տղամարդկանց տեղ: Այն ժամանակ կանանց աշխատանքն բավական արժան եր զնահատվում քան տղամարդկանց: Մի ժամանակ Անդիտակի գործարանային բանվորների հասակավոր մասի հազիվ մի քառորդն է տղամարդ հաշվվում:

Շատ անդամ մարդը նստում եր անգործ, իսկ կինն աշխատում եր գործարանում:

Յեկ նույնիսկ այն գեալքում ել, յերբ մարդն ել կինն ել աշխատում եյին, գրությունը շատ քիչ եր ավելի լավ լինում: Հայրն ու մայրը չեյին տեսնում իրենց յերեխաներին, վորոնք մեծանում

Եյլին կիսաքաղց, կիսամերկ, կեղտու, անըլա, ինչպես դապանի  
մանրիկ ճռւտեր. նրանք աճում եյլին ինչպես աղբաժույն, առանց  
մհծերի խռամքի:

## ԱՅՆՏԵՂ ՅԵՎ ՄԵԶ ՄՈՏ.

Այժմս անստեսական ճղնաժամով բոնվել են կապիտալիստական  
բոլոր յերկները:

Ամեն որ փակվում են հարյուրավոր գործարաններ, սնանկա-  
նում են սպասնյակ բանկեր, գործազրկությունից փողոց են նետ-  
վում հազարամիլիոր բանվորներ, վորոնց թիվը հասել է մոտ 35 մի-  
լիոնի, վորոնք դանվում են տնտեսական ամենածանր պայմաննե-  
րում: Նրանք դիմում են ինքնասպանության: Ամերիկայում գոր-  
ծազարկերը և նրանց ընտանիքները քաղցած և կիսաքաղց դրու-  
թյան մեջ են այն ժամանակ, յերբ պահեստներում փոտում են կեն-  
սամթերքները կամ ծովն են թափվում: Վերջերս «Խորհրդային  
Հայաստան» թերթում կար հետևյալ հազորդագրությունը:

«Բերլինում մի գործադուրկ հացթուիս փորձեց կախվել Գեր-  
մանիայի հանրապետության նախագահ: Հինդենբուրգի պալատի  
ցանկարատից. վստիկանները՝ բոնեցին անձնասպանին: Անձնա-  
սպանը հայտնեց, վոր իր անձնասպանությամբ ուզում եր ուշա-  
դրություն հրավիրել գործազուրկների սարսափելի կարիքների  
վրա»:

Զիարողանալով իրենց գոյությունը պահպանել՝ անձնասպա-  
նություն են դործում և կազմակերպության մյուս յերկրներում,  
վիեննայի (Ավստրիա) մեքենաշինարարական տեխնիկումի դիրեկ-  
տիվան դիմել եր այնտեղ գտնվող խորհրդային ներկայացուցչու-  
թյանը, վորագետի ավարտողները գան Խորհրդային Միություն  
աշխատելու, «վորովհետեւ վոչ Ավստրիայում և վոչ ել արտասահ-  
մանում նրանց համար աշխատանք չկա» գրում են նրանք:

Եհաստանից, Լատվիայից և Ֆինլանդիայից գործազուրկները  
զազուի փախչում են Խորհրդային Միություն, վորաեղ գործա-  
զորկությունը վերացել ե և կարիք կա հսկայական թվով բանվոր-  
ների:

Տնտեսական ճղնաժամի ամբողջ ժամրությունն ընկած և բան-  
վորության ուսերին:

Կրծատվում և աշխատավարձը, յերկարացվում ե բանվորական  
որր, արգելվում են ամեն տեսակի ցուցերն ու ժողովները: Գեր-

մանիայում աշխատավարձը կրծատելով, բանվորներից կարգել  
են այս տարվա 6 ամսում 6 միլիարդ մարկ, այսինքն՝ ամերիկ 1.  
միլիարդ:

Այսպէս և կապիտալիստական յերկրներում: Բոլորվիքն հա-  
կառակ պատկեր և Խորհրդային Միության մեջ: Հսկա թափով  
բարձրանում է ժողովրդական տնտեսությունը, աճում է արդյու-  
նաբերությունը, բարելավվում և բանվորների գրությունը, բան-  
վորներն աշխատում են 7 ժամ, չնայած դրան՝ ավելանում է բան-  
վորների աշխատավարձը: Ստեղծվում են լավագույն սանիտարա-  
կան պայմաններ: Նրանք աշխատում են հարվածային տեմպով,  
նրանք ստեղծում են նոր աշխարհ-սոցիալիստական աշխարհ:

Բոլոր գործարաններում ծավալվել և սոցմրցումն ու հարգա-  
ծայնությունը:

Մեզ մոտ բանվորները գիտեն, թե ինչու համար են աշխա-  
տում: Դրա համար ել աշխատանքը մեր յերկրում դարձել և «վառ-  
էլ», պատվի ու հերոսության գործ»՝ ինչպես ասում ե ընկ. Ստա-  
լինը:

Համաշխարհային պրոլետարիատի սոցիալիստական հայրենի-  
քը՝ Խ. Միությունը տնտեսապես և կուլտուրապես առաջ և զնում  
7 մղոնանոց քայլերով:

Միջազգային բանվորությունը գիտակցում է, վոր այս հա-  
ջողությունների մեջ փրկության ուղին վոչ թե բուրժուազիայի  
տված խոստումների մեջ ե: Նրանք համախմբվում են կոմ. ինտեր-  
նացիոնալի շուրջը և պատրաստվում վերջին ու վճռական կովի:

## ՅԱՆ-ՑԶԻ-ԿԱՊՈՒՅՏ ԳԵՏ.

Յան-Ցզի կաղույս գետը քշում ե իր անհանդիստ ալիքները  
ամբողջ Հսկայական Զինաստանի միջով, արևմուտքից արևելք:

Յան-Ցզին հսկայավոր տարիների ընթացքում իր ափերին տե-  
սել ե ճնշված չին ժողովրդին:

Զինաստանում շատ հող կա, բայց դյուղացի Լի-Չանը չունի:  
Ամբողջ հողի 4/5-ը գրավել են կարվածատերերն ու կուլակ-  
ները:

Լի-Չանը մեծ բնանիք ունի: Լի-Չանը կարվածատիրոջից կա-  
պակավ հող և վերցնում: Շատ է աշխատում, ուսեւ լու բան չունի:

Բերքի չուը Լի-Զանը տալիս ե հողի տիրոջը, մնացածը Լի-  
Չունից վեցյանում են պաշտոնյաներն, իբրև հարկ:

Զինաստանը նման ե պատառուտած վերմակի:

Ամեն մի նահանգ իր գեներալն ունի:

Դեներալները Զինաստանը պատառուտել են առանձին կտոր-  
ների, առանձին նահանգների:

Բոլոր գեներալներն ել մի որենք ունեն՝ ամենալավ կտորն ի-  
րենք վերցնեն: Կալվածատերերի ամբարներում բրինձ շատ կա,



### Զինացիների շահագործումը:

Բայց գեներալն ինքը կալվածատեր ե — կալվածատիրոջ բրինձին  
ձեռք չեն տալիս:

Լի-Զանը գեներալին ե տալիս բերքի մնացորդը. 30 տարվա  
հարկին առաջուց ե վճարում:

Յան-Յզին շատ հարյուրավոր այդպիսի Լի-Զաններ ե տեսել  
իր ափին:

Յան-Յզիի ափերին մեծ քաղաքներ կան, քաղաքներում զավոդ-  
ներ ու գործարաններ:

Հարուստ ե Զինաստանը: Այնտեղ շատ ածուխ, յերկաթ,  
ասվթ, վուկի կա:

Կապիտալիստները լավ հոտառություն ունեն: Նրանք պիտեն  
թե վարեղ կարելի յե լավ հարստանալ: Վաղուց ե, վոր Զինաս-

տանում տեղություն են անում Անդլիայի, Ճապոնիայի, Ամերի-  
կայի, Ֆրանսիայի և այլ ոտար պետությունների կապիտալիստ-  
ները:

Համարյա բոլոր զավոդներն ու գործարանները նրանց ե պատ-  
կանում: Նրանց նաև կարում են կապույտ դետի ալիքները:  
Նրանց համար են աշխատում չին բանվորները:

Աշխատանքն արժան է գնահատվում Զինաստանում: Տերը չե  
սարսափում, վոր բանվոր կկորցնի: Տասնյակ գործազուրկներ  
պատրաստ են նրա տեղը բռնելու: Ոտարյերկը բուրժուազիան  
հարստանում ե չինական արժան աշխատանքով:

Յան-Յզին կապույտ դետ եր, — կարմիր գետ դարձավ: Շողա-  
ցին նրա ջրերում ապստամբների կարմիր գրոշները: Նրա ալիքնե-  
րը պարտիզանների շատ արյուն տարան դեպի Խաղաղ ովկիա-  
նուը:

Ազգատամբների հրդեհած գյուղերի բոցը արտացոլեց նրա ջրե-  
րում:

Գյուղացիք ասացին, «Հողը մերն ե»:

Բանվորներն ասացին — «Մենք ստրուկներ չենք»:

Գաղաղեցին չինական գեներալները:

Ամեն մի նահանգ — իր գեներալն ունի:

Բոլոր գեներալները մի որենք ունեն. «ավելի լավ ե յերեք  
հազար անմեղներ մաշվան դատապարտներ, քան թե մի կոմու-  
նիստ կենդանի մնա»:

Զինացի գեներալներին ոտար պետություններն ողնության են  
ուղարկում փող, զենք, զինվորներ:

Կապիտալիստներն ափսոսում են կորցնել այդ քաղցր պատա-  
ռը — Զինաստանը:

Համառ ե հեղափոխության կարմիր գրոշը: Զինաստանի կամ  
այս, կամ այն շրջանում խորհրդային իշխանություն ե ստեղծ-  
վում:

Բայց նա յերկար չի կարող դիմանալ: Ազգատամբների ինքնա-  
շեն հրացանները, յերկժանիներն ու նիզակները չեն կարող դիմա-  
գրել գեներալական զորքերի թնդանության կրակին:

Սպիտակ ավաղակներն ավերեցին չինական կոմունան:

Անլուֆինի հանրապետությունը իջեցրեց իր դրոշակը:

Ազգատամբները տասնյակներով, հարյուրներով փախչում են  
չինական անսառի թափուտները, թաղնվում են Յզին-Զան: Յան  
լուսավորությունը խորքերում:

Այսպես հասունանում են պարտիզանական ջոկատները:

Պարտիզանական ջոկատները հասունացան, դարձան կարմիր

բանակ — ճրա գրոշի տակ 14 հազար մարտիկներ պայքարում են  
խորհրդային իշխանության համար :

Քայլ առ քայլ նա նոր շրջաններ և նվաճում պեներալական  
զորքերից :

Կոփիներ են լինում մեծ քաղաքների համար — Զանշայի,  
Նանչանի, Խանկոուի :

Գեներալները չեն կարող այնպիսի թնդանոթներ հնարել, վո-  
րով կարողանան յետ սպահել չինական հեղափոխությունը :

Յան-Ցին իր ավերին ամբողջ Չինաստանը խորհրդային կը-  
ահսնի :

Հզոր ալիքներով տարածվում է Չինաստանում հեղափոխական  
շարժումը :

Այդ շարժման զեկավարն ե չինական կոմունիստական կու-  
սակցությունը :

Չինաստանի տրդեն չատ արջաններում խորհրդային իշխանու-  
թյուն ե հաստատվել :

Այդ շրջաններում մոտ հարյուր միլիոն մարդ ե ապրում :

Կեցցե խորհրդային Չինաստանը



Չին հեղափոխական


## ԱԼԱՆԴՎԵՐԴԻ.

Գեղեցիկ ու կենդանի յև լոռին : Նա արտադրող է :

Անառաներում հազարավոր թռչուններ են յերգում, վախկու  
սկրունները մի ծառի փչակից գուրս գալով մի ուրիշ փչակ են վա-  
զում, դաշտերում աշխատանքն ու կյանքն ե յերում :

— Ո՛ւ... ո՛ւ...

Կեռումներ ձորերից սողալով, իրենց հետեւից վագոնները հա-  
զիվ քաշ տալով՝ հոգնած լոկոմոտիվները զալիս հասնում են Ալ-



Ալանդվերդ

լահվերդի կայարանին ու փոքր ինչ հանգստանալով՝ նորից շարու-  
նակում են իրենց ճանապարհը :

Կայարանից քիչ հեռու յերկնաձիգ ծխնելույզներ են բարձրա-

նում, վորոնց պնչերից գիշեր ու ցերեկ ծուխ և դուքս զալիս։ Այդ պղնձածուլարանի ծխնելույլներն են։ Դեսի այդ ծխնելույլներն են վազում տասնյակ վագոններ, բանվորներն խսկույն դատարկում են վագոնները ու յետ ճամբում։

Հանքը գիշեր ու ցերեկ վառարաններն են լցնում ու փայլուն կարմիր պղինձ պատրաստում մեր արդյունաբերության համար։ Աշխատանքը յեռում ե և հանքահորեցում։ Այնտեղ հանքափորները կարբիդի ճրագների լույսի տակ անդադար ճանկում են Լալվարի կուրծքն ու հանք հասցնում պղնձածուլարանին։ Հանքափորներն ամեն որ նոր ուղիներ են վորոնում։ Այնտեղ հույն, պարսիկ, ու հայ բանվորները բոլորը մի լողունդ ունեն։

— Հնգամյակը չորս տարում։ Գունավոր մետաղ մեր արդյունաբերությանը։

Ու սոցիալիստական շինարարության լողունգը նոր վոգի, նոր շունչ և տալիս նրանց։

Ու այսպես, վորպես մեղմանոցում, կյանքը յեռում ե Ալլահ-վերդում։

Իր գուրալի աղմուկով զալիս և մարդասար գնացքը։ Կայարանումյեռուզեռ և ընկնում, բոլորն չուսպում են գործի։

Վաղուց Ալլահվերդում չեղած գյուղացիներն այս բոլորը տեսնելով, հիացած կանչում են։

— Աղա, ես հո Մոսկով ե դառել։

Յել իրօք։ Ալլահվերդու բանվորությունը կարճ ժամանակամիջոցում կյանք ու շունչ տվեց դաշնակների ձեռքով ալիբիլած Ալլահվերդուն։ Մանավանդ վերջին 4-5 տարվա ընթացքում Խորհրդային իշխանությունը խոչոր աշխատանք և կատարել Ալլահվերդում։

Բացի գործարանի ու հանքերի վերակառուցումից, բանվորների համար բնակարաններ են կառուցվում, մի քանի դպրոց և բացվել։

Որվա աշխատանքից հետո, Փիզկուլտի դաշտում հալվագլած Փիզկուլտունիկները ցրվում են տները, կայարանից հեռանում են դնացքները, սակայն կյանքը ավելի աշխտու՞ հանքերումն է։

Գիշերն Ալլահվերդում չի իջնում, այնտեղ միշտ լուսափոր ե։ Հակա լամպաներ վառվում են և ամբողջ հանքն ու կայարանը դարսուի պես լուսավորում։ Գիշերվա լուսության մեջ լուսում և ձուլարանի վառարանների ու հիղրոկայանի դինամոնների բամբ աղմուկում։

Հ. ՄՈՒՐԱԴՅԱՆ

ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՅԵՎ «ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ»։

Մի քանի որ առաջ մենք ներկա եյինք մի շատ հետաքրքիր վեճի։ Գործը կոլխոզումն եր։ Վիճում եյին մեր դժվարությունների մասին։ Գյուղում կառուցվում եր կոլխոզի անասունների համար մեծ դոմ։ մեխը չեր բավականացնում։

Կոլտնտեսականները դրանում մեղադրում եյին կոռուպերացիային, կոլխոզի վարչությանը, գյուղվարչորդին և բոլոր հիմնարկներին, նույնիսկ և միլիցիային։

Խոսակցությունը մեխներից անցավ ուրիշ ապրանքների վրա, վորոնք նույնպես կոռուպերատիվում պակասում եյին։

Եւկ ահա, խոսակցությանը միշտամեեց վազգենը, տեղական ջոկատի ակտիվ պիտիվ ըստիները։

— Ինչպես թե չկա, գոռաց նա։ Մեզ մոտ ամեն ինչ կա։ Մենք կառուցում ենք Մազնիտոստրոյ, Դնեպրոստրոյ, Կուլնեցկոստրոյ։

— Սպասիր, սպասիր, փոքրիկ, կանգնեցրեց նրան հասակա-վոր կոլտնտեսականը։

— Առանց քեզ ել գիտենք, վոր կառուցում ենք, առա ասա-ինչո՞ւ մեխ չկա։

Վազգենը կծկվեց, քորեց ծոծրակը և ամաչելով հեռացավ։

ՄԵՐ ՀԱԶՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՍԿԱՅԱԿԱՆ ԵՆ.

Իրավացի յե՞ր, արգյուք, վազգենը, վորը կարծում է՝ յե՞ր մենք անցել ենք սոցիալիզմի ըլջանին, ապա մեզ մոտ չկա վոչ մի դժվարություն։

Իհարեւ, վոչ։ դժվարություններ մեզ մոտ կան և բավական լուրջ։ Ճիշտ ե, մեր հաջողությունները այնպես խոչոր են, վոր մենք վստահ նայում ենք առաջ, խփում ենք այդ դժվարություններին և վերացնում նրանց։

Բայց «այդպիսի նվաճումներ չեն տրվում ինքնահոսի կարգով... Մենք ճեռք ենք բերել այդ նվաճումները դժվարությունների հետ, պմուական սպայքարում» (Ստալին)։

ԱՌՄԱՆ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ.

Ինչպիսի յեն մեր դժվարությունները։

Եյ, ասենք, Ամերիկայում այժմ նույնպես «դժվարություններ» կան-ճպնաժամ, քաղց, գործազրկություն, աշխատավորների աղքատություն։ Ի՞նչպիսի տարբերություն կա մեր և կապիտալիստական դժվարությունների միջև։

Բնկ։ Ստալինը կուսակցության XVI համադրումարում ման-

բամասնորեն կանգ առավ և յերեան հանեց մեր դժվարությանների բնույթը:

«Մեր դժվարությունները—առավ և ընկ. Սալինը՝վոչ թէ անկման դժվարություններ են, կամ լճացման դժվարություններ, այլ աճման դժվարություններ, առաջնաղացման դժվարություններ: Դա նշանակում է, վոր մեր դժվարությունները արմատական կերպով տարբերվում են կապիտալիստական յերկրների դժվարություններից: Յերբ ՀԱՄԵ-ում խոսում են դժվարությունների մասին, նկատի ունեն անկման դժվարություններ... Յերբ մենք ենք խոսում մեր դժվարությունների մասին, նկատի ունենք վոչ թէ անկում և վոչ ել զարգացման լճացում (դադար)—այլ մեր ուժերի աճում, մեր ուժերի վերելք, մեր եկանոմիկայի առաջինացում»:

### ՄԵՆՔ ՀԱՎԱՏԱՑԱԾ ԵՆՔ, ՎՈՐ ԿՃԱՂԹԱՆԱԿԵՆՔ.

Այդ ի՞նչ է նշանակում: Դա նշանակում է, վոր մեր դժվարությունների մեջ գտնվում են հնարավորություններ նրանց հաղթարելու: Ալբինակ, վերցնենք, Մագնիտաստրոյը: Այդ հական մենք կառուցում ենք մեծ դժվարություններով: Պակասում է շատ բան, զիխավորապես մետաղ: Իսկ, ահա, կառուցելով այդ գործարանը, մենք նշանակալի չափով կվերացնենք դժվարությունները և մետաղի պականը:

Կամ վերցնենք հացի խնդիրը: Մեծ դժվարություններ ունեմինք մի քանի տարի առաջ—հացը պակասում էր: Կուսակցությունը վճռեց, վոր մենք հացի դժվարությունները կարող ենք հաղթահարել, կառուցելով խոշոր խորհրդային տնտեսություններ և կոլտնտեսություններ: Յեզ ահա մեծ դժվարություններով մենք պայքարում ենք կոլտնտեսության և խորհրդնականության շինարարության համար: Յեզ այժմո շատ դժվարություններ կան: Հացի դժվարությունները հիմնականում մենք վերացրել ենք: Այսպիսով մեր դժվարությունները վերանում են հնգամյակի իրադրման հետ զուղմթաց: Յեզ վորպեսզի ավելի արագ հաղթահարենք այդ դժվարությունները, հարկավոր ե ավելի բարձրացնել ահմարերը սոցիալիստական շինարարության բոլոր շրջաններում:

\*\*\*

Գիտեյինք մենք առաջ,  
Հիշենք և հիմա.

Դժվարություններ գոյություն ունեն,  
Վորպեսզի հաղթահարեն:

ԲԵԶԻՄԵՆՑԻ

### ԻՄԱՆԱՆՔ ՄԵՐ ՅԵՐԿՐԻ ՀԱՐՍՈՒԹՅՈՒՆԵՐԸ

#### ՄԵՐ ԲՆԱԿԱՆ ՀԱՐՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.

(ՆՄԱՆՈՒԹՅՈՒՆ)

Եշխարհում վոչ մի տեղ այնքան բնական հարսություններ չկան, ինչքոն մեզ մոտ՝ Խորհրդային Միության մեջ: Մենակ



ՅԵՐԿՐԻ ՀԱՐՍՈՒԹՅՈՒՆ

Հենց մեր Խորհրդային Հայաստանի սորերում ու գետնի տակ դեռ անհամար ու անթիվ չհայտաբերած հարսություններ կան:

Յեթե մի կողմը խողնենք Ալահվերդու ու Դափանի պղնձա-


հանքերը, վորսնք հանրածանօթ են բոլորին և այժմս ողտադարձ-վում են, պղինձ կա նաև մեր շատ սարերում: Կա նաև յերկաթ, և' սնդիկ, և' ծծումք, և' քարածուխ, և' պեմզա, յե՛վ տուՓ, յե՛վ գրանիտ.—Ով գիտե, ասում են թէ արծաթ ել կա, վոսկի ել: Ապա՝ մեր Արգնու և Խստիառյի հանքային ջրերը: Ու ել շատ-շատ հանքեր կան:

### ՄԵՆՔ ՍՊԻՏԱԿ ԱԾՈՒԽ ԵԼ ՈՒՆԵՆՔ.

Ուրիշ գոչ մի տեղ գուցե այնքան սպիտակ ածուխ չի ինչ, ինչ-քան մեր Խորհրդային Հայաստանում: Ինչո՞ւ— վորովհետեւ սպիտակ ածուխը ջրա-ելեկտրականությունն ե, իսկ մեր յերկրի գետերը լեռներից իջնելով այնքան ուժ ունեն, այնքան թափ, վոր մեծ, շատ մեծ հիգրոելեքտրոկայաններ կարելի յե շինել, մանա-քանդ վոր մեր ամեն մի դետի վրա 3-5 կայան կարելի յե շինել: Այս, ինչքան մեծ կայան և ջորագեսը, վորն արդեն համարյա պատրաստ ե, Քանաքեռի կայանը, վոր մի տարուց հետո պատ-րաստ կլինի, իսկ մի հինգ տարուց հետո Սոլակի վեթխարի ելեկ-տրոկայանը:

### ԲԱՄԲԱԿԻ.

Մեր Միությունը մինչեւ հիմա ել դեռ ստիլված և իրեն հար-կավոր բամբակի մի մասն ուրիշներից, կապիտալիստական յերկ-




Բամբակի տեղափոխությունը գետի հավաքակայանը.

կրներից զնել: Վորտեսղի ուրիշներից բամբակի չգնենք ու նքանցից

անկախ բամբակի անչափ շատ կտորներ չինենք, պետք և շատ բամբակի ունենանք: Մեր Միության մեջ բամբակ տվող յերկրնե-րից մեկն ել Հայաստանն ե: Ղոերի ջրանցքները շինելուց, Սար-գարաբարդի մեծ ջրանցքը շինելուց հետո, ինչքան-ինչքան շատ հող կունենանք բամբակ ցանելու համար: Ապա յերբ մեր յերկրում համատարած կոլեկտիվ տնտեսություն լինի (վոր շատ հեռու չե): և բոլոր դաշտային կոլտնտեսությունները բացի բամբակից ուրիշ բան չցանեն: Այս, են ժամանակ գործվածքի ուրիշ մեծ գործարան-ներ ել կշինենք-բացի լենտեքտիլից:

Զկարծեք թէ մեր Հարստությունները դրանով պերջացան: Այս բոլորը դեռ Անդրկովկասի մի հանրապետության մեջ եր, իսկ



Նավթի վեցկա Բագրամ.

ապա Անդրկովկասում .—չե վոր մեր հարեվան Հանրապետու-թյունների հարստությունները միաժամանակ մեր հարստությու-նըն և և ընդհակառակն՝ մերը՝ նրանց հարստությունն ե:

Նազթը արդյունաբերությունը գործի գցելու ամենակարեվոր  
նյութն է : Կովկասը առանձնապես հարուստ և նավթով : Նազթը  
գտնվում է Բաղվում, Գրտղնիում և Մայկոպում : Խմբերի ամսա-  
ները գրանց համար ատամներ են ցույց տալիս նրանց աչքը գրանց  
վրա յէ : Նազթը ավելի շատ հնարավորություն և տալիս սոցիա-  
լիստական ինգուստրիալի արագ զարդացմանը : Բացի Կովկասից  
մենք նազթ ունենք և և . Միության այլ մասերում՝ Ուրալում,  
Կազմկատամում և Հեռավոր Արևիելքում : Ամեն որ նոր հանքեր են  
Հայտնաբերվում :

Այսպիսով մեր յերկիրը այնքան հարուստ է, վոր մենք ան-  
կախ կապիտալիստական յերկրներից, բոլոր հնարավորություն-  
ներն ունենք մեղ մոտ սոցիալիզմ կառուցելու : Բանվոր դասակար-  
գը կռմկութեակցության ղեկավարությամբ այդ իրագործում է :

ՍԻՐՈՎ

## ԹԱՂՎԱԾ ՎՈՍԿԻ.

Յերբ յես փոքր եյի ; իմ պապն ասում էր, թե վոսկին գետ-  
նից և գուրս գալիս : Ու են ժամանակ յես կարծում եյի, թե բոլոր  
դրամները՝ թուղթ, արծաթ, վոսկին, հենց եղակն պատրաստ  
գետնից բանում են :

Յերբ մեծացած ու աշխարհից բան հասկացա, տեսա, վոր պա-  
պիս ասածը ճիշտ է, բայց ուրիշ կնքալ .— Սոսոր գետնից և գուրս  
դայիս, կովին արածում ե կոթ տալիս, կաթը յուզ ու պանիր ե  
դառնում ու յերբ այդ վաճառում են, կարող են փոխանակել վոս-  
կու հետ : Յորենը գետնից և գուրս գալիս, ցորենն արդեն արժե-  
քավոր մի բան է : Պղինձն, ածուխը, յերկաթը գետնի տակից են  
համում : և եղ հանքերը թանգարեք են :

Ես բոլորը գիտեյի : Բայց յեթե սրանից մի և տարի առաջ ա-  
ռաջին, իոր մեր Ալաղյաղի ստորոտներում, գետնի տակ հօկայա-  
կան քանակությամբ «փող» կա, չեյի հավատա :


Ենի հավատա, բայց արի տես, վոր եղակն է :

Սըսնից 6-7 տարի առաջ, չգիտեմ ինչպես, մեկն Անի կայա-  
րանի մոտ գտնվող Անի փոքրիկ գյուղի մոտ տեսել ե մի հանքավեմ  
զա, ու հասկացել ե, գիտակցել ե, վոր գա շատ հարկավոր նյութ  
և զանազան տեսակ գործարանների համար իբրեւ ոժանդակ հու-  
ժույթ : Բացի դրանից անգնահատելի շինանյութ ե :

Ու մեր սոցիալիստական յերկրի բանվորներն եսանեղ ծակել  
են գետինը, փորել, ներս են մտել, մեծ ու լայն շախտաներ չինել,  
պեմզան դուրս հանել :

Անու աղեմզան այժմ ուղարկում են վոչ միայն մեր Միության  
շատ հեռավոր գործարաններն ու քաղաքները, այլ և արտասահման  
ու նրա տեղ մեղ հարկավոր գործիքներ ու մեքենաներ ենք ստա-  
նում :

Ու ենանեղ, ուր առաջ Անի գյուղի աթարաբլուրներն ելին յե-  
րեվում, այժմ բավական սիրուն ու կոկ բանվորական քաղաք է



Արթիկ առավելագույն բանվորական բնակաբան Յերեանում.

շինած : Յերկաթզի ճյուղ և անցկացրած մինչեւ հանքերը : Բայց  
մենակ դա չե, Ալաղյաղի մյուս փեշերում պեմզայի ավելի մեծ  
հանքեր կան :

Հնգամյակի վերջում պեմզան մեր արդյունաբերության մեջ  
խոշոր տեղ ե բանելու :

ՍԻՐՈՎ

## ԴԺԻՆ ԽԵԼՈՒՑԲՐԻՆՔ.

Դեղեցիկ ե լեռնոտ Լոռին, սիրուն, վիթխարի լեռները, սա-  
զարթաշատ անտառներն ու անդնդախոր ձորերը : Այդ խոր ու ա-  
նասելի ձորով հոսում ե խենթ Դերեդը և նրա զիժ վտակ Զորա-  
գետը :


Սկիզբն առնելով ձյունապատ մթին լեռներից Զորագետը

կառապի վիշտապի նման հոսում եր փրփրաբաշ վազքով անողութ  
ու անմիտ :

Դարեր, չատ վարեր նա միայն ավերել, քշել վոչնչացրել և եր  
ընթացքին հանդիպող ծառերն ու խոտերը և յերեք վոչ մի ողութ  
մ տվել ձորի վերեվում՝ կոռվա հովտում ապրող աշխատավոր  
դյուլացիներին :

— Դեռ յերկա՞ր պետք ե եղածս անխմաստ զոռոցով  
անցնես փրփրագեղ, — հարցրեց նրան Խորհրդային իշխանու-  
թյունը :

— Վաշ, վիշ...— չում եր դետը խրոխտ ու հպարտ, կար-



Զորագեսէ հիդրոկայանը.

Ճես ուզում եր ասել, թե ինքը բնության անհաղթելի զավակն ե և  
վոչ վոքի չի ուզում ճանաչել :

— Լավ, տեսնենք...— ասացին բանվորներն ու ինժեներները :  
Հավաքվեցին, ժայռերը պատռեցին, անասելի դժվարություն-  
ներով, ամենաամուր քարի միջով թունել փորեցին, — զիժ գետի  
առջեվ խրամատներ կանգնեցրին ու մոտ որերս մենք արդեն կու-  
նենանք Զորագեսի հսկայական ելեքորոկայանը, վոր Հենց ես տա-  
րի 22,200 կիլովատ ուժ կտա Խորհրդային Հայաստանի գործա-  
րաններին, ու լույս՝ կոռվա դյուլացիներին :

Եօպես, գժին մենք խելքացնում ենք, յերջանիկ կյանք ստեղ-  
ծելու համար :

## ՊԱՅՔԱՐ ՆԱՎԹԻ ՀԱՄԱՐ .

Այժմ ամբողջ աշխարհում պայքարում են նավթի համար : Աշ-  
խարհում յեղող պաշարները արագ սպառվում են : Գիտնականնե-  
րը հաշվել են, վոր Ամերիկայի նավթն ընդամենը 20 տարի կրա-  
վականանա : Նավթի համար չատ անդամ քիչ ե մնացել կոիկ ծաղի :

Չուր չեր, վոր Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո  
Անդիքան ամենից առաջ կովկասի վրա հարձակվեց : Անդրկովկա-  
սի ժողովրուղներին բայլչեվիկների գեմ «ողնելու» պատրվակով է  
նա իր ծանր թաթը դրեց նավթի հանքերի վրա :

Անդիքացիք սոխազված ելին կովկասից քշվել, բայց անդիքա-  
կան բուրժուազիան դեռ հույս ունի տիրելու նավթի շրջաններին :

Նավթի արդյունաբերության վերականգնումը ԽՍՀՄ-ում  
ասատիկ անհագնատացրեց կապիտալիստներին : Ինչ կատաղի վոռ-  
նոց բարձրացավ Յելլոպաշյում և Ամերիկայում, յերբ առաջին  
անդամ խորհրդային նավթը յերեվաց արտասահմանյան շուկա-  
յում :

Նավթի թագավորներ մոռկֆելլերն ու Դեսերգինդը սկսեցին  
Հիշել նավթի հանքերի նախկին տերերին — Նորելին և յուուներին,  
նրանք պահանջում ելին, վոր խորհրդային նավթի բերելին արգել-  
մի, դիմեցին իրենց կառավարություններին, վոր նավթն իրենց  
նոխույն տերերին տրպի :

Վոչ աղաղակներն ողնեցին, վոչ վողերը : Մեր նավթը գնե-  
ցին Փրանսիացիք և ուրիշները այդ կապիտալիստներն ել խելո-  
քացան ու մեզ հետ պայման կնքեցին :

Հիմա ավելի շատ ենք նավթ արտահանում ու նրա համար  
ստացած վոսկով մեքենաներ ենք գնում :

## ՆԱՎԹԻ ԱՄԵՆԱՄԵԾ ՊԱՇԱՐՆ ԱՄԲՈՂՋ ԱՇԽԱՐՀՈՒՄ — ԴԱ ԽՍՀՄ-ՈՒՄՆ Ե .

ԽՍՀՄ . . . . .	2874 միլ. տոնն
Հարավային Ամերիկա . . . . .	1230 » »
ՀԱՄՆ	930 » »
Պարսկաստան և Միջագիտք . . . . .	775 » »
Մեքսիկա . . . . .	602 » »
Մյուս բոլոր պետությունները . . . . .	231 » »

# ՏԻՐԱՊԵՏԵՆՔ ՏԵԽՆԻԿԱՅԻՆ

ՌԱԴԻՈ.

I

Ամեն տեղ լիքն և անտեսանելի նյութով, յեթերով։

Զեա հնապիսի տեղ, ուր յեթեր չլինի։ Նա ամեն տեղ կա։

Յերեսի ձեզանից ամեն մեկը քար կլինի գցած ջրի մեջ և տեսած կլինի, թե ինչպես քարն ընկած տեղից ամեն կողմի քրա ալիքներ են տարածվում։

Ելեքտրականության չորսիվ կարելի յե ստիպել յեթերին տատանվել ու կտանանք լույսի և ելեքտրոմագնիտի ալիքներ։ Յերբ ճրադր վառում ենք, մենք տեսնում ենք կամ զբար ենք լույսը։

Դա նրանից ե, վոր մեր աշքերը ընդունում են լույսի ալիքները։

Լույսը տարածվում է լույսի ալիքների միջոցով, վորոնք մի վայրկյանում տարածվում են 300 հազար կմ։ Ծաղկութիւնները կամ ելեքտրոմագնիտի ալիքները մենք աշքերով չենք կարող տեսնել։ Նրանց բոնելու համար առանձին տեսակի գործիքներ են հար կավոր։ Ելեքտրոմագնիտի ալիքներ ստանալու հասարակ գործիքը առաջին անգամ շնորհ գերմանացի գիտնական Հենրիխ Հերցը՝ 1898 թվին։ Նա ել սարքեց ամենահասարակ սարքը՝ այդ ալիքները ի հայտ բերելու համար։ Ստանալու և հաղորդելու այդ վորձերը գործադրվում եյին միայն լարորատորիայում, իսկ գործական նպատակների համար անուելոք եյին։

Առաջին անգամ կատարյալ ուսդիոհազորդիչ և սաղելունդունիչ սարքեց ուսւ գիտնական Պոպովը, միաժամանակ և խտացար Մարկոնին։

1895 թ. Պոպովը կրոնշտագում առանց լարերի կազ հաստատեց միայն մի կիլոմետր հեռավորության վրա։

Այսպիս-ուսդիոհազորդման համար 2 ուսդիոկայան պետք ե ունենալ ։ Հաղորդող և ընդունող հաղորդող ուսդիոկայանը կայ-

մեր ունի, վորոնց մեջ ձգված են լարերը, կամ ինչպես ասում են զանտենցիոնիրը։

Ծաղկութաղորդման համար հասուակ շենքեր կան, վոր կոչվում են ստուգիաներ։ Այդ ստուգիաներումն են գտնվում ելեքտրական գործիքները-միլրոֆոնները։ Նրանց միջով և անցնում ելեքտրական հոսանքը։ Յեթե միլրոֆոնի առջեկ խոսում են կամ նվազում, ապա միլրոֆոնի միջով անցնող ելեքտրական հոսանքը փոփոխվում է, հետո այդ փոփոխված հոսանքը կնում և հաղորդող ուսդիոկայանի ապարատում, ենտեղ ուժեղանում է, զնում կամ մըսնում և անտենանաների մեջ և յեթերի զանազան տատանումներ և առաջ բերում։ Բնդունող ապարատում բնումում են այլ տատանումները, այդպիսով հանձնում են հաղորդող ստուգիային։

Ելեքտրոմագնիտի ալիքները ամեն կողմ գնում են։ Բնդունող ուսդիոկայանում ել անտեննա կա, ելեքտրոմագնիտի ալիքները նրա մեջ ելեքտրական հոսանք են առաջ բերում։ Նա անցնում և ուսդիունդունիչի մեջ, անցնում և հեռախոսի խողովակների միջով և մենք լում ենք սադիոհազորդումը։

## ԻՆՉՊԵՍ Ե ՇԻՆՎԱԾ ՌԱԴԻՈ-ԸՆԴՈՒՆԻՉԸ

Մադեկունդունիչի առաջին մասը հենց այնպիսի մասերից և բաղկացած, վորոնց չորսիվ ընդունիչը կարելի յե լարել ամեն մի սադիոկայանից ընդունելու համար։ Դրա համար սադիունդունիչը լարերով պատրաստված կոճ կա։ Եղ կոճը միացրած և անտեննային։ Մեր ցանկությամբ անտեննային կարելի յե միացնել կամ ամբողջ կոճը կամ նրա մի մասը, ու դրա չորսիվ կարելի յե ընդունիչը լարել զանազան յերկարության ալիքները ընդունելու։

## II

Մեր կոճը մի գլան կլինի, վոր մենք կշինենք սովորաթղթից եղ գլանի վրա մենք մեկուսացը պղնձել լար ենք փաթաթում, ահա և ինքնախնդուկցիս կոճի կազմությունը։ Պատրաստեցեք ձեզ ահերթեցո իրերը։ սովորաթուղթ, սոսինձ, մկրատ, բիզ, չնչուն լար և միլիմետրերի բաժանած քանոն։ Սովորաթղթի գլանի չափերը այսպիս ե. գլանի արտաքին արամագիծը պետք ե լինի 12 սմ., իսկ յերկարությունը՝ 23 սմ.։ Սովորաթղթի գլանը պետք ե դիմացկուն, պինդ լինի, ուստի յեթե սովորաթուղթը բարակ ե, պետք ե մի քանի անգամ փաթաթել։ Լավ կլինի, վոր

Կոճը սոսնձելին ու փաթաթելը մենակ չարվի, այլ յերկուսով — եղպես ավելի հեշտ և եւ արագ ե կատարվում:

Յերբ անհրաժեշտ իրերը պատրաստել եք, սկսեցիք սովարաթուղթը գլան շինել-ցույց տված չափերով: Այլ վոր սովորաթուղթը հյուսնի սոսնձով պիտի ամրացնի, պետք է տառաջնոց տաքացնի, վարպեսզի դլանը չբացվի, ամուր թելով մի քանի տեղից կապեցեք: Թողիք սոսնձը չորանա:

Պատրաստի սովարաթղթի գլանի վրա պետք ե յար փաթաթել: Դրա համար գլանի մի ծայրից 5-10 մմ, դեպի կենտրոնը ըլոզով յերկու այնպիսի ծակ ենք անում, վոր մեր լարն անցնի: Լարը պետք ե անց կացնել մի ծակով նախ գլանի մեջը, այնտեղից ել մյուս ծակով հանել գլանի մյուս կողմը: — այդ դուրս հանած ծայրը հինգ սանտիմետր յերկարություն պետք ե ունենա: Այդպիսով ծայրը կամքացնենք և լարը կփաթաթենք: Փաթաթելիս մի ձեռքով կոճը կպատճենք, մյուսով լարը կղեկավարենք:

Պիտի ե փաթաթել խիտ, մի սղակը մյուսին կզած, մինչեվ վոր կոճի մի ծայրից մինչեւ մյուսը կծածկվի: Լարի մյուս ծայրն ել պետք ե ամրացնել այնպես, ինչպես տառաջինը:

## ԽԱՆԻՌ-ՀԱՐԹՈՒԹՅՈՒՆ:

Բանակը տեղակորված եր փոքրիկ ամառանոցային տեղում:

Հրաշը իր ստուգիայի համար մի փոքրիկ նկուղ ձեռք ըերեսիվ, խսկույն ձեռք զարկեց սարքավորելու:

— Ե՞ր, Հովիկ, Գեղորդ, — Հրամայում եր նա, — չուտ լարձրոց տանիքը և կոմինաերնի աշտարակ հաստատեցե՞ք... իսկ թուման ու Հովիկը լարն կանցկացնեն: . . . Դե, չո՞ւտ, չո՞ւտ... ախտոր/վազը հաղորդում կլինի, իսկ գետ ինչքա՞ն դոբծ ունե՞նք...

Խոկապես շատ գործ ունեյին: Պիտի և միկրոֆոն զնել, անտեննաներ, հօգային մասը շինել, լարերն անցկացնել, հրամարակը կահավորել—լսողների համար, սազիս լսելու մասին հայտարարել հարեւան գյուղացիներին:

Տղաներն աշխատում եյին միահամուս և ուրախ: Յերեկոյան ուշ վերջապես փոքրիկ փորձ արին:

Հրամարակում հովաքից համարյա ամրող պիոներ կոլեկտիվը՝ բարձրախոսի մեծ, սև խողովակի սուջել:

— Հը! ի՞նչ է, կիսոսի թե չե, — յենթաղլություններ եյին անում:


— Իհարկե, վո՞չ... բան չի գուրս գալ:

Յես ել եմ կարծում... ի՞նչ գրանց բանն ե ընդունիչ սարքի: Մադիոհալորդո՞ւմ...

— Ախար յես ել ելի ասում, — կարծես մեկի առաջ արդարանալով, ասաց Հուսիկ անտեննան: Մադիոհալորդումն, իհարկե, բարդ բան է...

Գեղորդ—հողաշինարարը ձղված-կանգնած եր հեռախոսի մոտ, վոր միացնում եր ստուդիան հրամարակին:

— Հը! ի՞նչ է: Եղ ի՞նչ բանի յեք, — անհնամքեր աղաղակեց նա խողովակի մեջ: Տղերքն եստեղ հուզվում են:



Բադիո (լոկիս).

Հրաչի ձայնը հանդիսաւ ուստասիսնեց:

— Հիմա կոկոնք և լեռ բռուեցից հետո...

Հրապարակը լարված սոկլեց: Բայց անցավ մի բոպէ, յերկու չորս, — ուսուզորը համար կերպով լուս է:

— Հրաչ, ախար եղ ի՞նչ բանի յես, քննցի ու ինչ է, — ձանձրութավ աղաղակեց Գեղորդը.

Հեռախոսի խողովակից լսեց Հրաչի վախեցած ու զարմացած ձայնը:

— Ի՞նչպիս, մի թե վոչինչ չի լսվում. . . Հազորդումն արդեն յեղել է:

— Վոչ մի ծպտուն—հուսալքած պտտասիսնեց Գեղորդը:

— Լո՛վ, սպասեցե՞ք... Խոկույն յես... եստեղ միկրոֆոնում ինչ վոր բան է փչացել... . . .

— Յրգեցիք, աղե՛քք... լսեցիք, զե բավական է... ծաղրանը աղաղակեց մեկը:

— Բարձրախոյացը պետք է վերցնէ, թե չե գիշերը բոլոր սոխակներին կվախեցնի... . . .

— Սպասեցիք, աղե՛քք, զուցե կընվի, վերավորանքից ու հուզ-

մունքից գողացող, ձայնով աղաղակեց Փեփորպը : Ախար չի կարող պատահել, վոր չեր աշխատանքը...

— Եինեցից ելի՞ լուսիցինք...

— Լավ է լուսմ ... և յուր, սադիոտեխնիկներ :

Տղաներն ուզում եյին ցրվել, յերբ հանկարծ ուսւացորի սև կոռզորում ինչ վոր բան խռիսաց և նրանից հետո լսվեց . Հրաչի ձայնը :

Փեփորդն ուրախությունից վեր թռավ, Հուսիկը հոլի նման պուռյու յեկալ, Փեփորդի ձեռքից դուրս խլեց խողովակն ու գոռաց :

— Խոսքս յետ եմ վերցնում . . . Հարյուր տոկոսով Հաղթություն : Հաղորդումը կլինի :

Մյուս որը կայացավ ուագիտհաղորդիչի հանդիսավոր բացումը : Հրազդարակում մեծ ամբոխ եր հավաքվել : Մոտակա գյուղերից հրավիրված յերեխաների հետ, մեծերն ել եյին յեկել :

Հրաչի հողատար ձեռքով կաղմված ահապին ափիշան հայտարարում եր, վոր ուագիտհաղորդումը կսկսվի յերեկոյան ժամի ուղիղ 7-ին : Մրագիրն ե . պիտուղական ուագիտիթերթ-«Բանակի կյանքը», սեփական խմբի համերգ և վերջում կենդանի ցնորք-պատկեր «անտառը վերջալուսին» : Տրանսլացիան կլինի ըրջակայքից :

Աղիղ ժամի 7-ին ու խողովակից պարզ կերպով հնչում եր Հրաչի ձայնը :

— Ալլո, ալլո, —խոսում ե պիտուղական բանակի կայսեր :

Քեթակի նման գողուացող հրապարակը վայրկենապես սկսվեց : Դյուզացի պատանիները և յերեխաները իրենց աչքերին չհավատալոյի, բերանները բաց վրա եյին վաղում դեպի բարձրախոսի սև խողովակը :

Հաղորդումը դրավեց բոլորին :


— Ա՛յ ճարպիկ պիտուղերիր, սպրե՛ք, —լսվում եյին հիացած ձայներ :

## ԲԱՎ. Ե ԱԹԱՍՁԻՆԻ ԼԻՆԾՈՒԹԻՒՆ

Մենք կառացում ենք սոցիալիզմ : Աճում են նոր Փարբեկաներ, վործարաններ, խորհրդային և կոլեկտիվ տնտեսություններ : Մեզ սկսած են պատրաստված, վորակյալ բանվորներ, վարպետներ, գյուղատնտեսներ, տեխնիկներ և ճարտարապետներ :

Ամբողջ աշխատավորությունը պետք է տիրապետի դիսության և տեխնիկային :

Գտնել նկարի վրա վերելից աջ նրա նկարը, ով տվեց ոիբապետի գիտության և տեխնիկային լոգուննը :



# ՑԱՆԿ

Ժուրնալ դասագրքերի երաժշտական առքիվ  
Հոկտեմբեր—Ձմռանավոր . . . . . Վ. ՆՈՐԵՆՑ

## 1) ՆՈՅԵՄԲԵՐՑԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Հայաստանը նոյեմբերից առաջ . . . . .	ՀԱՅԿ
Պետք ե զիտենաս . . . . .	ՍԻՄԱԿ
Ամբաղնդեն Անդրկովկասի Ֆեդերացիան . . . . .	ՀԱՅԿ

## 2) ՀՈԿՏԵՄԲԵՐՑԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Վ. Ի. Լենին . . . . .	ԹԱՐԳՄ.
Ալիք . . . . .	ՍԻՄԱԿ
Այ թե ինչ . . . . .	ՍԻՄԱԿ
Հոկտեմբեր . . . . .	Հ. Գ.

## 3) ԿՈԼՏՆՑԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Մեր կոլխոզը . . . . .	Հ. Գ.
Կարմիր արող . . . . .	ԹԱՐԳՄ.
Բամբակի համար . . . . .	Ա.ՍՈՒԻՐ Վ.ԵՆԿԱՌԻ
Լեդի Աստուրի ամեազողությունները . . . . .	ԹԱՐԳՄ.

## 4) ԴՊՐՈՅՑՈՒՄ

Կառարել կուսակցության կենսոկամի վորոշումները . . . . .	Հ. Լ.
Դպրոցը և աշխանացանը . . . . .	Լ.
Լիմենի հարվածային . . . . .	Լ.
Առաջին որք դպրոցում . . . . .	Լ.
Աշխատանքի սենյակ . . . . .	Լ.

## 5) ԿՅԱՆՔ ՄԵԶ ՄՈՃ ՅԵՎ ԿԱՊԻՏԱԼԻՍ ՅԵՐԿՐՆԵՐՈՒՄ

Իմչգես եյին ապրում բանվորները նախկին գործարան . . . . .	ԹԱՐԳՄ.
Այնունա և մեզ մոտ . . . . .	Գ.
Յան-Ցզի Կապույտ գետը . . . . .	ԹԱՐԳՄ.
Ալահվերդի . . . . .	Վ. ՄՈՒՐԱԴՅԱՆ
Դժվարություններ, «դժվարություններ» . . . . .	ԹԱՐԳՄ.

## 6) ԻՄԱՆԱԿ ՄԵՐ ՅԵՐԿՐԻ ՀԱՐՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Մեր քնական հարսուրյունները . . . . .	Ս.
Թաղված վուկին . . . . .	ՍԻՄԱԿ
Գժին խելոքացրին . . . . .	ՍԻՄԱԿ
Պայքարենի նավքի համար . . . . .	ԹԱՐԳՄ.

## 7) ՏԵՐԱՊԵՏԵՆՔ ՏԵԽՆԻԿԱՅԻՆ

Թարին . . . . .	ԹԱՐԳՄ.
Ո՞վ ե առաջինը . . . . .	

և դպրոցականներին հասարակական աշխատանքների  
ներգրավելու խնդիրները :

ԺՈՒՐՆԱԼ - ԴԱՍԱԳԻՐՔԸ — լրացնելու յև հասարակագիտական  
դիսցիպլինայի դասընթացք, ոժամդակելով դասազրե-  
րին :

Խնդրվում է բոլոր ընթերցողներին, դպրոցներին, առցելու-  
թաժամանակներին քղակացություններ ուղարկել այս խնդիրների  
շուրջը հետևյալ հասցեյով՝

ՅԵՐԵՎԱՆ, Պետիրատ, Տափֆու փող. № 29.  
Ժուրնալ-դասազրերի խմբագրություն :

### ՄԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ

Կիչանմբը դասավորելիս մի շաբթ նկարներ իրմաց տեղը չեն  
գրվել.

- 27 յերես — կարմիր արող — պետք եւ լինի բամբակ:
- 38 » Աերմազոնիչ մեժնանա — պետք եւ լինի խոս ենձոք  
կոմբայն:
- 61 » Բան. բնակարանը Յերեվանում — պետք եւ լինի կար-  
բիդի գործարանը Յերեվանում:
- 62 » Զորագեսի եկեղեցկայան — պ  
ետքակայան:



NL0987122



1931р. - 695

II

27036

ԳՐԱՑ 25 ԿՋԳ. (4<sup>1</sup>/<sub>2</sub>, Ա.)

695



# ЮНЫЙ УДАРНИК

Журнал-учебник III и IV г.г.

Госиздат ССР Армении

Эревань—1931